

ԺԱՆ ԺՈՐԵՍ

**ՊԵՏՔ Է ՓՐԿԵԼ
ՀԱՅԵՐԻՆ**

9(47.925)

Ձ-86

ԺԱՆ ԺՈՐԵՍ

42.

ՊԵՏՔ Է ՓՐԿԵԼ ՀԱՅԵՐԻՆ

6016



«ՆԱՅԱՊԵՏ»

ԵՐԵՎԱՆ - 2009 թ.

ՀՏԴ 941(479.25):32.001
ԳՄԴ 63.3(2Հ)+66
Ժ-860

Jean Jaurès – Il faut sauver les Arméniens

Թարգմանությունը՝ **Գրիգոր Ջանիկյանի** / *Գրիգոր Ժանիկյան*

Խմբագիր՝ **Խաթուն Թեմիզյան** (Կանադա)

Վերջաբանը և ծանոթագրությունները

Անդրանիկ Պետրոսյանի (Կանադա)

Traduit du français par **Grigor Djanikian** (Arménie)

Rédaction: **Khatoune Témisjian**, Ph. D. (Canada)

Postface et annotations par **Antranig Bedrossian** (Canada)

Ժորես Ժան

Պետք է փրկել հայերին / ֆրանսերենից թարգմանեց Գրիգոր Ջանիկյանը.- Եր.: Նահապետ, 2009, 80 էջ:

Գրքում տեղ են գտել Ժան Ժորեսի՝ Ֆրանսիայի Ազգային Ժողովում ունեցած երեք հայանապատ ելույթները, որոնցով նա, ըստ Մարսել Պրուստի, մյուս ականատեսների, գերազանցել է Ցիցերոնին, հին ու նոր ժամանակների բոլոր հռետորներին:

Ելույթները մեկնաբանում, արժևորում, արդիականությունը իմաստավորում է միջազգայնագետ Անդրանիկ Պետրոսյանը (Կանադա):

Ներկայացված են նաև Ժան Ժորեսի կյանքի ու գործունեության համառոտ ժամանակագրությունը, այլ վավերագրեր:

ԳՄԴ 63.3(2Հ) + 66

ISBN 978-9939-803-38-8

© «Նախիջևան» գիտաուսումնական կենտրոն
© Institut "Nakhijevan" du Canada
© "Nakhijevan" Institute of Canada

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ QUESTIONS NATIONALES ET INTERNATIONALES

«Ազգային ու միջազգային հիմնախնդիրներ» մատենաշարը լույս է տեսնում միջազգայնագետ Անդրանիկ Պետրոսյանի ղեկավարությամբ

Մատենաշարի հրատարակությունը նախաձեռնել է «Նախիջևան» գիտաուսումնական կենտրոնը (Կանադա)

Série de publications sous la direction de:


Antranig Bedrossian



Կանադայի «Նախիջևան» գիտաուսումնական կենտրոնը իր առջև նպատակ է դրել տարբեր հրատարակությունների, դասախոսությունների, լսատեսողական և այլ միջոցներով արժարժեք ազգային ու միջազգային հիմնախնդիրներ, որոնք առնչվում են հատկապես Հայ դատին ու պահանջատիրությանը, համաշխարհայնացմանն ու շրջանայնությանը, մարդկային անվտանգությանը, քաղաքացիական հասարակությանը, գաղափարախոսական քննարկումներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանչի նախաբանը	7
1896 թ.-ի նոյեմբերի 3-ի ելույթը Ազգային ժողովում	11
1897 թ.-ի փետրվարի 22-ի ելույթը Ազգային ժողովում	32
1897 թ.-ի մարտի 15-ի ելույթը Ազգային ժողովում	36
Ժան ժորեսի հայանպաստ խորհրդարանական ելույթներու քաղաքական արժեւորումը (վերջաբանի փոխարեն)	44
Պատասխանատուները (հավելված)	59
Ժան ժորեսի կյանքը (ժամանակագրություն)	65
Ծանոթագրություններ	69



ԹԱՐԳՄԱՆՉԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Նա հետո պիտի դառնար համաշխարհային հանրությանը հայտնի ընկերվար, միջազգային ընկերվարական բյուրոյի ազդեցիկ անդամ, հիմնադրեր Ֆրանսիայի ընկերվարական կուսակցությունը, «Յումանիտեն», հանուն խաղաղության համընդհանուր գործադուլի կոչ անելուց երեք օր անց, 1-ին աշխարհամարտի սանձազերծումից երեք օր առաջ, Փարիզում, Մոնմարտր փողոցի «Քրուասան» սրճարանում ահաբեկչի գնդակից ընկներ ու սպանվելուց տասը տարի անց իր արժանի տեղը գտներ Պանթեոնում:

1896 թ.-ին Ժան Ժորեսը Ֆրանսիայի Ազգային Ժողովի 34-ամյա պատգամավոր էր, ընդամենը երեք տարի առաջ էր խորհրդարանական ընտրվել: Սակայն դա չխանգարեց, որ համիդյան նախնիների բռն ստանալուն պես, հիմնավորապես ծանոթանա Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Գամբոնի վավերական ճեպագրերին, ականատեսների վկայություններին, անգամ Խորենացու, Եղիշեի Պատմություններին¹ ու Ազգային Ժողովում, ժամ ու կես տևած ելույթում, ոչ միայն դատապարտի Օսմանյան կայսրության հայա-հալած քաղաքականությունը, այլև իր իսկ կառավարության, ապա նաև Մեծ Բրիտանիայի, ցարական

Ռուսաստանի երկդիմի դիրքորոշումը հայկական հարցի նկատմամբ: Ընկերվար պատգամավորի ելույթը այնպիսի ցնցող տպավորություն թողեց, ներազդեցություն ունեցավ, որ Մարսել Պրուստի նման խոշորագույն արձակագիրը, որն այդ տարիներին գրում էր «Ժան Սանեոյ» վեպը, Ժորեսին իր ամենահանդուգն կերպարներից մեկի՝ խորհրդարանական Գուգոնի նախատիպը դարձրեց²:

Ժան Ժորեսը հայերի դատով սկսել էր հետաքրքրվել նախքան Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելը: Դեռևս 1895 թ.-ի հունվարի 27-ին, ջարդերի գույժը Եվրոպա հասնելուն պես, նա «Լա փրօփռեփյուրիք» («Փոքրիկ հանրապետություն») պարբերաթերթում հրապարակում է «Հայաստանում» ծավալուն հոդվածը, որտեղ ահագանգում է, թե «Կարմիր սուլթանը»՝ Աբդուլ Համիդ 2-րդը ինչպես է իր կանոնավոր զորաբանակներով ու քրդական ոճրախմբերով բնաջնջում հայերին:

Խորհրդարանական նրա հաջորդ՝ 1897 թ.-ի փետրվարի 22-ի և մարտի 15-ի ելույթները անհամեմատ խիստ ու անողոք էին, Ժորեսը կատարված ողբերգության՝ 200 000 (իր հիշատակած թիվն է) անմեղ հայերի սպանդի համար ուղղակի մեղադրում էր Եվրոպայի այն կառավարություններին, քաղաքական ու հասարակական գործիչներին, ովքեր 1895-96 թվականների կոտորածի քստմենտի մանրամասներին հասու եղել ու մեղսակից լություն էին պահպանել, փաստորեն դարձել էին սուլթանի հովանավորներն ու համախոհները:

Հայերի դատի հետևողական պաշտպանությունը

Ժան Ժորեսի համար սոսկ խորհրդարանական պարտականություն չէր: Նա թուրքական կոտորածները իրեն հատուկ հոետորական հրայրքով դատապարտեց 1903 թ.-ի փետրվարի 15-ին Փարիզում կայացած հանրահավաքում, իսկ Ադանայի դեպքերից հետո, 1909 թ.-ի ապրիլի 4-ին, իր խմբագրած «Յունանիտեում» առաջիններից մեկը փաստեց, որ երիտթուրքերը էությամբ նույն հետադեմներն են և սուլթանական մոլագարությամբ ու դաժանությամբ շարունակում են հայերի զանգվածային սպանողը:

Բացի պատմական նշանակությունից, ինչո՞վ են այսօր կարևորվում Ժան Ժորեսի խորհրդարանական ելույթները: Իրենց այժմեականությամբ, ցեղասպանության ընդունման ու հատուցման անխուսափելիությամբ: Ժամանակակից թուրք միջազգայնագետները սիրում են ճամարտակել, թե իբր 1915 թվականի հայերի «տեղահանությունն» ու «ցավալի կորուստները» (իրենց ձևակերպումն է) պայմանավորված էին համաշխարհային պատերազմով, այն հանգամանքով, որ հայերը կռվում էին հակառակորդի բանակում, ձգտում էին ներսից խարխլել ու տապալել թուրքական պետականությունը: Չանդրադառնանք այն իրողությանը, որ Վանի, Մուսա լեռան հերոսամարտերը սոսկ ինքնապաշտպանական բնույթ են ունեցել, դարձյալ վերհիշենք Ժան Ժորեսի նման միջազգային վարկ ու համբավ ունեցող քաղաքագետի խորհրդարանական վկայակոչումները, որոնք անառարկելիորեն փաստում են, որ արևմտահայության բնաջնջումը հղացել էր դեռևս՝ Աբդուլ Համիդ 2-րդ արևախում սուլթանը, իրագործել

սկսել էր 1895 թ.-ից, երբ Օսմանյան կայսրությունը ոչ պատերազմում էր, ոչ էլ հայերն էին «ներսից» դավեր նյութում: Եվ դեռևս հայտնի չէ, եթե ճիշտ ժամանակին չհնչեր ժան ժորեսի, Վիլյամ Գլադստոնի նման մարդասերների բողոքը, «Կարմիր սուլթանը», որը գոհերի թիվը 300 000 էր հասցրել, իր նենգադավությունը չէ՞ր իրագործի, տխուր ավարտին չէ՞ր հասցնի: Ուրեմն մի անգամ էլ կրկնենք ու պնդենք որ հայերի ցեղասպանությունն իրականում սկսվել է 1895 թ.-ից, ընդհուպ 1922 թ.-ը շարունակվել է, բայց իր տխուր ավարտին չի հասել: Չէ՞ր կարող հասնել:

Որպես մատենագիտական հավելում ավելացնենք, որ ժան ժորեսի՝ հայերեն առաջին անգամ ներկայացվող խորհրդարանական այս երեք ելույթները գրառնվել են Ֆրանսիայի Ազգային Ժողովի սղագրական ծառայությունների կողմից, հրատարակվել «Ֆրանսիայի հանրապետության պաշտոնական տեղեկագրում» (խորհրդարանական քննարկումներ), իսկ առանձին գրքով, բոլորովին վերջերս՝ 2007 թ.-ին, Փարիզում: «Պետք է փրկել հայերին» խորագրով այդ արժեքավոր գիրքը³ հրատարակության է պատրաստել, նախաբանն ու վերջաբանը գրել, ծանոթագրել է Վենսան Դյուկլերը: Շնորհակալություն նրան:

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻՎՅԱՆ

1896 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ԵԼՈՒՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ¹

Պարոնայք², ես ավելի մեծ հույսեր կտածեի Ֆրանսիայի արտաքին գործերի պարոն նախարարի³ սուլթանին հղած բարեկամական դիտողության արդյունավետության վրա, եթե չհիշեի, որ նման հանդիմանագրեր բազմիցս հղվել ու ոչ մի ազդեցություն, հետևանք չեն ունեցել: Արտաքին գործերի պարոն նախարարի բացատրություններից հետո, ինձ թվում է, հարցը նույնությամբ՝ անլուծելի էլ մնում է:

Պարոն նախարար, ինձ հիացրեց այն համարձակությունը, որով դուք այս ամբիոնից փորձեցիք շրջադարձել պատասխանատվությունները, նրանց հասցեին, որոնց կոչում եք հայերի արտաքին սադրիչ-հրահրիչներ, հնչեցրիք խիստ արտահայտություններ, անգամ նախազգուշացումներ, ու՞րեք սպառնալիք էլ էին պարունակում: Դուք, ինչպես և հարգարժան պարոն դը Մյունը, հավակնում եք կարծել, որ նրա՛նք են իրենց անխոհեմությամբ ու հրա-
նումներով կրում են Օսմանյան կայսրության հայրենակիցների վրա տեղացող չարիքների մեծ մասի պատասխանատվությունը: Միայն թե դուք մոռացաք ավելացնել, գոնե չավելացրիք՝ նույն ներշնչումով, որով հանդես եկավ պարոն դը Մյունը, որ նրանք ինչպիսի դատապարտման էլ ենթարկվեն, հաստատ սադրիչ-հրահրիչներ չեն: Դուք մոռացաք հիշեցնել, որ նրանց պատասխանատվությունից առաջ, եթե իհարկե, ունեն պատասխանատվություն, թերևս

նաև մի քանի անհատների կամ կոմիտեների պատասխանատվությունից առաջ, չէ՞ որ մի ամբողջ ժողովուրդ է նահատակվել ու կոտորվել, կրկնում եմ՝ մոռացաք հիշեցնել, այդ անձանց պատասխանատվությունից առաջ, շատ առաջ հենց իր՝ սուլթանի, ինչպես նաև ամբողջ Եվրոպայի պատասխանատվությունը:

Սուլթանի պատասխանատվությունը

Պարոնայք, տասնութ տարի առաջ, Ֆրանսիայում ու Լոնդոնում հայկական կոմիտեներ ստեղծվելուց շատ առաջ, Եվրոպան համախմբվեց Բեռլինի վեհաժողովում⁴, ընդունեց Թուրքիայի հայ հպատակներին պաշտպանելու անհրաժեշտությունը: Ահա արդեն տասնութ տարի է, որ Եվրոպան Բեռլինի վեհաժողովի դաշնագրով պաշտոնապես ստանձնել է հայերի ապահովությունն ու կյանքի, պատվի պաշտպանությունը: Միաժամանակ որոշվել է, որ Եվրոպան ամենամյա հաշվետվություններ է պահանջելու, ամենամյա վերահսկողություն է սահմանելու այն բարենորոգումների ու երաշխիքների կապակցությամբ, որ սուլթանը խոստացել է իրագործել Փոքր Ասիայի իր հպատակների նկատմամբ: Շատ լավ, բայց ո՞ր են այդ հաշվետվությունները: Ո՞ր է վերահսկողությունը: Որտե՞ղ են միջամտությունները, որ Եվրոպան է պաշտոնապես խոստացել: Երբ այս պարտավորությունների ձախողման հանդեպ, Եվրոպայի անտարբերության հանդեպ, որը շրջում է գլուխն ու թույլ է տալիս, որ Փոքր Ասիայում ամենավերջին օրինազանցումները հրահրվեն և գոհանում է Օսմանյան կայսրությունը մասնատելով, հանուն սրա կամ նրա շահի խլելով Բուլղարիան, Բոսնիան, Հերցեգովինան, Կիպրոսը,

ապա Թուրքիային մնացած գավառներում օրինախախտումներ է հանդուրժում, որոնք իր առաջին միջամտության պատճառը դարձան, որոնք թերևս ավելի ուշ նոր միջամտությունների կամ նոր մասնատումների պատճառ պիտի դառնան... զարմանալի՞ է, որ հայերը, որոնք եվրոպական այս խարդավանքների, խոստումնազանցության զոհերն ու նահատակներն են, հասնեն մեր մայրաքաղաքները՝ Փարիզ, Լոնդոն, փորձեն փոքր ինչ շարժել Եվրոպայի գուրը, սկեռեն ուշադրությունը: Եվ հենց նրանց դեմ, Ֆրանսիայի արտաքին գործերի պարոն նախարար, կոտորածների հաջորդ օրն իսկ, այն դեպքում, երբ զոհերի թիվը հարյուր հազարի էր հասել, դուք, մոռանալով, որ Եվրոպան իր խոստումները չի հարգել, ձեր ամենահանդիմանական արտահայտությունները ուղղեցիք *(Ճափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*:

Մենք նույնպես, մեր հերթին խաղաղություն ենք ուզում, բայց չենք ուզում, որ այն սոսկ խոսք լինի, որն այստեղ արտաբերեց արտաքին գործերի պարոն նախարարը, այլ դառնա դիրքորոշում, որն արտացոլել ենք մեր բոլոր փաստաթղթերում, որն ի գործու լինի խաղաղ միջոցներով երաշխավորել հայ հպատակների իրավունքների հարգանքը, ապահովությունն ու կյանքը:

Անիմաստ է հիմա, այս պահին, այս խորհրդարանում, մեր ամբողջ երկրում, որ չափազանց երկար ժամանակ անտարբեր կամ քիչ է իրագել եղել, նկարագրել արիավիրքները, որոնք տեղի են ունեցել Փոքր Ասիայում: Հիմա, այս պահին էականը պատասխանատվությունները ճշտելն է, ընդ որում ոչ միայն, ինչպես իր տպավորիչ անկաշկանդությամբ, վճռական ու զուսպ պերճախոսությամբ պարոն

դը Մյունը վարվեց՝ սուլթանի պատասխանատվությունը, այլ հենց Եվրոպայի պատասխանատվությունը, ավելի ուղղակի՝ Ֆրանսիայի կառավարության պատասխանատվությունը: Ինչպես նաև այս պահին Եվրոպայի խղճին ծանրացած հարցին որոշակի լուծում գտնելը:

Այո՛, պարոնայք, Փոքր Ասիայի ազգաբնակչության վերաբերյալ այնպիսի փաստեր են կուտակվել, որոնց մասին կարելի է միանշանակ ասել՝ հազիվ, մասամբ միայն իրենց որոշ նախադեպերն ունեն: Սակայն, եթե անգամ այդ իրողությունները տարերային են եղել, եթե այդ բոլոր բռնությունները, բռնաբարությունները, նախճիրները, կողոպուտները, հրկիզումները, որոնք տեղի են ունեցել Փոքր Ասիայում, տարերայնորեն են տեղի ունեցել, ակնհայտ է, որ անկախ ամեն ինչից, մարդկության պատմության անցյալի փորձի, սովորության տարր պարունակել են:

Երբ Սասունի⁵ դեպքերն ուսումնասիրող Էրզրումի հանձնաժողովի ու քննիչների զեկուցագրերում, երբ Եվրոպայի հյուպատոսների՝ Փոքր Ասիայի վեց գլխավոր վիլայեթներում⁶ կատարված դեպքերի պաշտոնական զեկուցագրերում ես կարդացի քրդերի ու սուլթանի զորամիավորումների համատեղ գործադրած դաժան բռնությունների մանրամասները, երբ ծանոթացա հայ՝ երկար ժամանակ հլու ու հնազանդ ազգաբնակչության՝ քրդերի կամայականությունների ու հափշտակությունների դեմ ուղղված անդրանիկ դիմադրության փորձերին, երբ պատկերացրի այդ քոչվորների ու Հայաստանի հովիվների, մշակների առաջին արյունոտ բախումները հովիտներում ու անտառներում, քրդերի անսպասելի մոլեգնությունը, ծայր առած բնաջնջման պատերազմը, սեփական, հրդեհից խորտակված

տներից գաղթող հայ ընտանիքներին, ծերունիներին, որոնց մերձավորները շալակած տանում, ճանապարհին ճարահատ թողնում էին, ու որոնք տեղում խողխողվում էին, խելագարված կանանց ու մայրերին, որոնք ձեռքի ափով փակում էին ճչացող երեխաների բերանները, որպեսզի չմատնեն իրենց փախուստն անտառ, և երեխաներին, որոնց թաքցնում, մտցնում էին քարերի տակ, ծառերի բնարմատների մեջ, որոնք հարյուրներով խեղդամահ էին լինում, և հղի կանանց, որոնց որովայնները պատռում էին, սաղմը բիրերի ծայրերով հանում, ման էին ածում, կույս աղջիկներին, որոնց թուրք զինվորներն ու վաչկատու քրդերը իրար միջև բաժանում ու բռնաբարում էին, մինչև որ թուրք զինվորները, իրենց կրքերին հագուրդ տալուց հետո հրեշավոր սաղիզմով գնդակահարեին՝ այնպես, որ փամփուշտը փորատակից մինչև գլուխը հասնի՝ սպանությունն էլ յուրօրինակ բռնաբարություն դառնա, իսկ գիշերները, վրանների մոտ զինվորներն ու քոչվորները մույն խենեշ շվայտությանն էին տրվում, դիակների համար մեծ փոսեր էին փորվում, և վշտից խելացնոր հայերը ողջ-ողջ նետվում էին այնտեղ, ու կառափնատված քահանաները, որոնց գլուխները անարգում, անամոթաբար աճուկների արանքն էին խոթում, և ամբողջ ժողովուրդը, որը դեպի լեռնադաշտերն էր փախչում, համոզվեցի, որ հետո, երբ այս բոլոր բարբարոսները զգացին, որ Եվրոպան անտարբեր է մնում, խղճահարության ոչ մի խոսք չի լսվում նրանց հասցեին, որոնց իրենք պղծել ու կոտորել են, բնաջնջումը միանգամից անհամեմատ ծավալեցին, բնաջնջմանը զանգվածային բնույթ հաղորդեցին: Այլևս ոչ թե փոքր խմբերի, այլ քաղաքներում, շեփորի ազդականչով, նախնական պայմանա-

վորվածությամբ, կանոնավոր հաջորդականությամբ, օրական զանգվածաբար 3000-ից 4000 հայ էին կոտորում: Ահա՛, թե ինչ է տեղի ունեցել, ահա՛, թե ինչին է Եվրոպան ականատես եղել, ու ահա՛, թե ինչից է երես թեքել... և երբ, կրկնում եմ, ես հասու եղա մանրամասներին, ինձ թվաց, թե Երեսնամյա պատերազմի⁷ բոլոր մղձավանջները նորից են հրահրվել Արևելքի այդ հեռավոր, վայրագ հորիզոնում:

Բայց էականը, ամենածանրն այնտեղ սանձազերծված մարդկային բրտությունը չէ, բրտության պոռթկումը չէ: Ամենածանրն այն է, որ տարերայնորեն չի պոռթկացել, հրահրվել, խրախուսվել՝ անհագ ախորժակը գրգռվել է օրինավոր կառավարության կողմից, ում հետ Եվրոպան բազմիցս ամենայն լրջությամբ ստորագրություններ է փոխանակել: Այո՛, այնտեղ մի անձ է գերիշխում՝ սուլթանն է ուզել, կազմակերպել, դեկավարել կոտորածները: Նա տեսել է, որ տասնհինգ տարի է ի վեր, ամենուր, որտեղ քրիստոնեական համայնքներ են գոյություն ունեցել, այդ քրիստոնեական համայնքները՝ կամ իրենց իսկ նախաձեռնությամբ կամ արտասահմանի դրդմամբ, ինքնավարության են ձգտել: Այսպիսով սուլթանը, իր գահակալության հենց սկզբից տեսել է, թե ինչպես են Բուլղարիան, Սերբիան, Բոսնիան, Հերցեգովինան թոթափում օսմանյան լուծը: Նա մտածել է, որ հայկական պահանջատիրությունը, որը ձևավորվել է Կիպրոսից՝ Բեռլինի վեհաժողովի գաղտնի պայմանավորվածությամբ անգլիական կղզի դառնալուց ոչ հեռու, կարող է նոր անդամահատությունների պատրվակ դառնալ: Եվ քանի որ սուլթանն ի վիճակի չի եղել բարենորոգումներով, իրավական ու արդարադատ վարչակարգով զսպել իր՝ ըստ էության հեզ հպատակներին, ընդհակառակը՝ չնայած իր

երեսպաշտ խոստումներին, ավելի ու ավելի է բացարձակացրել մոլեգին ու դաժան միապետությունը, շատ շուտով հույսը միմիայն ուժի՝ այնպիսի միջոցի վրա է դրել, որն իրեն մինչև վերջ հավատարիմ էր մնալու: Թուրքական ավանդական նկարագրի ուժի, որը շատ ճիշտ ներկայացրեց պարոն դը Մյունը: Ահա այս ուժը գործադրեց սուլթանը հայերի դեմ: Եվ նա մտածել է, իրավացիորեն մտածել է, պարոնայք, որ իր նպատակին հասնելու համար պիտի միմիայն Եվրոպան կատարված փաստի, ավարտված սպանդի առջև կանգնեցնի: Նա զգացել է, որ Եվրոպան տատանվում է, անկայուն է, ներքին պառակտումներով բաժանված է և, իրոք, մինչ՝ այդ տարանջատված, անգոր դեսպանները նախճիրների ամենաօրհասական պահին բարենորոգումների՝ կեղծ մարդասիրական, ծիծաղելի պահանջներն էին ներկայացնում, սուլթանը սանձարձակ անկաշկանդությամբ ավարտին էր հասցնում կոտորածները, որպեսզի մեկընդմիջտ ձերբազատվի հայկական հարցից, ինչպես նաև ձերբազատվի Եվրոպայի երեսպաշտ պնդերեսությունից՝ այն Եվրոպայի, որը, ինչպես դուք՝ ինքներդ, թե՛ ցավակցում է և թե մեղսակից է (*Ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում, բողոքի բացականչություններ*):

Միաժամանակ սուլթանը խաղում էր Եվրոպայի, խաղում էր ձեր և մարդկության հետ: Ի՞նչ ասեմ, դուք համոզված էիք, որ Սասունի առաջին ջարդերից հետո Էրզրում քննիչ հանձնախումբ կուղարկվի⁸, կարծում էիք, որ Եվրոպայի ներկայացուցիչները այդ քննիչ հանձնախմբի կազմում կներգրավվեն: Պարոն նախարար, կարդացե՛ք, ամենայն հավանականությամբ կարդացել եք քննիչ հանձնախմբի արձանագրությունները, և համոզվել, որ թուրքական

6016

հանձնախումբը Եվրոպայի պատվիրակներին անընդհատ մերժել է այն վայրերը հասցնել, որտեղ կատարվել են քստմունքի նախճիրները, որպեսզի նրանք հանկարծ չկարողանան դեպքի վայրում ճշմարտացի վկայություններ հավաքել: Հենց Թամայանի 1894 թվականի դատավարությունից, որի մասին տեղեկագրել է Անկարայի հյուպատոսը, դուք կարող եք համոզվել, թե ի նպաստ իրեն կեղծ ցուցմունքներ կորզելու համար ինչպիսի դաժան միջոցների է դիմել սուլթանի կառավարությունը: Խոսքն այն մասին է, որ նրանք հայերին բռնությամբ, խոշտանգումների ենթարկելով ստիպել են ասել, նույնիսկ ստորագրել, որ խժոժություններն իրենք են սկսել: Ընդ որում բոլոր բնակավայրերում էլ եղել են տեղական պաշտոնյաներ, որոնք գիտակցել են իրենց պատասխանատվությունն ու իրար ասել՝ «Թերևս վաղը Եվրոպան միջամտի, ու սուլթանն ստիպված լինի մեզնից հաշիվ պահանջել»: Սուլթանն ինքն էլ կուզենար պալատում հյուրընկալվող դեսպաններին հավաստել իր բարի կամքն ու հնազանդ հպատակների բարի կամքը: Եվ շատ հայերի, որոնց ընտանիքները հենց այդ պահին խող-խողվել են, ստիպել են վկայել, որ իրենք են մեղավոր, որ իրենք են սկսել: Հենց ձեր հյուպատոսներից մեկն է պատմում, թե գլխավոր վկաններից մեկին, ես հիմա կնկարագրեմ, ինչպես են կտտանքների ենթարկել: Նրա գլուխը դանդաղ ծակել, մեջը ձյութ լցված ընկույզի, թե կաղինի կեղև են խցկել ու ամեն անգամ, երբ նա նման դաժան փորձությունից մի պահ սթափվել է, հարցրել են՝ «Հիմա կստորագրե՞ս, որ քո հայրենակիցներն են նախահարձակ եղել»: Ահա այսպիսի վկայություններ են Եվրոպա առաքվել: Ահա՛ ճշմարտությունը սուլթանի պատասխանատվության մասին:

Եվրոպայի պատասխանատվությունը

Միաժամանակ ակնհայտ է՝ բացահայտելու համար հարկ չկա դիվանագետ լինել, Եվրոպայի պատասխանատվությունը: Ուստի մեր բոլորի պարտքն է եվրոպական լայնախոհ հայրենասիրությամբ, ես շնորհակալ եմ պարոն Դընի Կոշենին այդ մասին տպավորիչ պերճախոսությամբ արտահայտվելու համար, մեր բոլորի պարտքն է, քանի որ Եվրոպան ձախողել է իր առաքելությունը, քանի որ շահամոլությամբ, նախանձախնդրությամբ, ամոթալի եսամոլությամբ ինքն իր մեջ պառակտվել և թույլ է տվել, որ այնտեղ մի ամբողջ ժողովուրդ խողխողվի, ժողովուրդ, որն իրավունք ուներ Եվրոպայի խոստման վրա հույս դնելու, ու չի միջամտել միայն այն բանի համար, որ վախեցել է մնացուկների բաժանման համար մղվելիք քաշքշուկից, կրկնում եմ՝ մեր պարտքն է այստեղ խոստովանել Եվրոպայի գործած սխալներն ու հանցանքները, որպեսզի անհրաժեշտ քավության ձգտի (*Ծափահարություններ ձախ ծայրահեղականների, բազմաթիվ ձախերի շարքերում*):

Այո՛, Եվրոպայի՝ քրիստոնյա ու քաղաքակիրթ հորջորջվող Եվրոպայի այս համընդհանուր պատասխանատվության մեջ կան երեք երկրներ, որոնց թվում ցավով պիտի հիշատակեմ նաև մերը, որոնք առանձնահատուկ, ծանր պատասխանատվություն են կրում: Այդ երեք երկրներն են՝ Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան:

Պարոնայք, Անգլիան ասացի... Ես չեմ ուզում միանալ այս մեծ երկրի նկատմամբ նյութվող միտումնավորությանն ու ատելությանը, որ այժմ ձգտում են սերմանել մեր ժողովրդի մտայնությունում: Ինձ հայտնի է, որ հիմա, Ֆրանսիացի ժողովրդի հոգեբանությունը փորձում են փոփոխել՝

արգահատելի պառակտմամբ ազգային ինքնության միասնական պահանջատիրություն ներարկել... *(քուն ծափահարություններ)*... Ես չեմ հասկանում նման հետևողական հակակրանքը Անգլիայի նկատմամբ: Ո՛չ ես, ո՛չ իմ մտերիմները չենք տրվում խորամանկորեն արմատավորվող այս պառակտմանը *(զանազան շարքերից՝ «Ճիշտ է, շատ ճիշտ է»: Տարբեր հակազդեցություններ դահլիճում)*: Միաժամանակ, այդ պատճառով, ես չեմ ուզում նվազեցնել այն պատասխանատվությունը, որ իմ կարծիքով Անգլիան կրում է հայկական հարցի առնչությամբ: Ընդ որում պետք չէ, որ ինքներս սահմանենք այդ պատասխանատվությունը: Այն համարձակորեն սահմանել են իրենք՝ Անգլիայի ազնվական ուղեղները: Անգլիայի պատասխանատվությունը պատկերացնելու համար բավական է կարդալ դուքս Արգայլի՝ պարոն Գլադստոնի⁹ հետ Դրիմի կառավարության վերջին վերապրողի սքանչելի գիրքը, որը, «Մեր պատասխանատվությունը Թուրքիայում»¹⁰ խորագրով, ընդամենը մի քանի ամիս առաջ է լույս տեսել: Դուքս Արգայլը գտնում է, որ արդեն մեկ դար է, Փիթի և Ֆոքսի՝ ռուս-անգլիական քաղաքական հիմնահարցի բուն պայքարից անմիջապես հետո, Անգլիան վճռականորեն Ռուսաստանի դեմ է ելել, ուստի, Անգլիան շատ հաճախ զուտ եսամոլական շահագրգռությամբ համակված, դառնում էր Թուրքիայի նախանձախնդիր պաշտպանը, ընդ որում իր իսկ ապահովությունից դրդված հրահրում էր սադրանքներ, անկարգություններ, օրինազանցություններ, որոնք ըստ էության կարող էին և տեղի չունենալ: Բայց սրանք Անգլիայի հին պատասխանատվություններն են: Նոր պատասխանատվություններն ի հայտ եկան այն պահին, երբ նա

արտաքուստ հակոտնյա դիրք գրավեց՝ այո՛, արդեն քանի՛ ավելի ճշգրիտ մեկ կամ երկու տարի է, որ հատկապես հայկական հարցի նկատմամբ Անգլիայի ու Ռուսաստանի միմյան տեղի է ունեցել դերերի փոփոխություն: Մինչև այժմ Ռուսաստանն էր, դրա փաստական վկայությունը Բեռլինի դաշնագիրն է, որ Եվրոպային ստիպում էր միջամտել սուլթանի և նրա հպատակների հակամարտությանը: Ու ճիշտ հակառակը՝ Անգլիան էր հնարավոր ամեն ինչ անում, որ կանխեր Եվրոպայի միջամտությունը, ամեն կերպ պահպաներ Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու անկախությունը: Մինչդեռ ահա մի տարի է, որ Անգլիան է ստանձնել Ռուսաստանի, Ռուսաստանը՝ Անգլիայի դերը: Ու ի հայտ են եկել պետական այրեր, ինչպես ասենք դուքս Արգայլը, որոնք ներկա իրավիճակը երկարաձգելու համար բացահայտորեն հայտարարում են, որ Թուրքիայի համար նախընտրում են Ռուսաստանի հովանավորությունը:

Պարոնայք, ստիպված եմ պնդել, որ ես չեմ կասկածում նման զգացմունքների անկեղծությանը: Մենք վատ ենք հասկանում անգլիական արմատական դրամատիրության օրենքներն ու ազդեցության ոլորտները: Անգլիական դրամատիրությունը խառնվում է աշխարհի բոլոր գործընթացներին, և այն իրադարձությունները, որոնք մեզ համար, քանի որ չափազանց ինքնամփոփ կյանքով ենք ապրում, հեռավոր են թվում, յուրովի, անմիջականորեն բորբոքում են Անգլիայի զգայունակությունը: Սակայն դրամատիրության՝ ազդեցության ոլորտները ծավալելու անհագ մղումը անընդհատ գործում է, իսկ մարդկայնության ազնվագույն զգացումը, որքան էլ որ անկեղծ լինի, միշտ, պատրաստակամորեն վերափոխվում է հովանավորչության: Ուստի

ասում են, որ հենց Անգլիան նոր դիրքորոշում, նույնքան էլ նոր ու մտահոգող մարտավարություն է որդեգրում, նրա անմիջական պարտականությունն է դառնում համապատասխան այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որպեսզի ոչ ոք չնկատի ազգային հավակնոտության խարդավանքները: Այն նույն պահին, երբ թվում է, թե Անգլիան Ռուսաստանի առջև բացում է թուրքական արևելքի դռները, այն նույն պահին, երբ Անգլիան տարբեր խոստումներով, օսմանյան կայսրության հնարավոր մասնատման հայտարարություններով փորձում է գայթակղել Ռուսաստանին, նույն Անգլիան Եգիպտոսում վարանում է իրագործել իր միջազգային պարտականությունները, և Եվրոպայում հարց է ծագում՝ արդյո՞ք հայկական հարցի իր վերաբերմունքում նույնպես Անգլիան ինչ-ինչ սաղրանքներ չի քողարկում: Այս կասկածն իսկ բավական է, որ գրեթե ոչնչի հավասարվեն այն պատկառելի ծերունու խոսքերի բարոյական արժեքը, որին քիչ առաջ նման մեծարանքով ողջունեցինք: Ահա, թե իմ կարծիքով քննարկվող հարցում ո՞րն է Անգլիայի պատասխանատվությունը:

Բայց այլ պատասխանատվություն ևս գոյություն ունի, որն ինձ թվում է թույլ կտաք նույն անկաշկանդությամբ ձևակերպել: Դա շատ անհրաժեշտ է, որովհետև իմ կարծիքով այն անավարտ ու մշուշոտ նախադասություններում, որոնք այս ամբիոնից հնչեցրեց արտաքին գործերի պարոն նախարարը, մի մանրամասն կա, որը կարծում եմ արժե մտապահել՝ արտաքին գործերի պարոն նախարարը, որպես ռուս ազգի ղեկավարի՝ վերջերս Փարիզ կատարած այցելության ամենաուրախալի արդյունք, նշեց, թե ինչպես ֆրանս-ռուսական բանակցություններում հայկական հար-

ցի վերաբերյալ որոշակի համաձայնություն է ձեռք բերվել: Հետևաբար նա մեզ ենթադրել տվեց, որ Ֆրանսիայի և Ռուսաստանի այդ հստակ պայմանավորվածությունը հայկական հարցի վերաբերյալ, ամենայն հավանականությամբ, եվրոպական համադաշնության համար, այդպես գոնե կարելի է կարծել, հայկական հարցին միջամտելու որոշակի հիմք կդառնա: Ուրեմն մենք առավել ևս իրավունք ունենք, կարծում եմ դուք ինձ թույլ կտաք նույնիսկ լուրջ պարտականություն կոչել, ամենայն անկեղծությամբ ճշտել, թե մինչև հիմա՝ արդեն երեք տարի՝ հայկական հարցում ի՞նչ դեր է խաղացել Ռուսաստանը: Պարոնայք, դա շատ կարևոր է նաև այն բանի համար, որ, ինչպես կփորձեն ներկայացնել հիմա, դա կլինի հենց Ֆրանսիայի կառավարության պատասխանատվությունը, բանի որ մեր երկրի քաղաքականությունը Փոքր Ասիայում Ռուսաստանի քաղաքականությունից չի տարբերվում: Ուստի իմ մեղքը չէ, որ ես ստիպված պիտի լինեմ Ռուսաստանի քաղաքականության միջոցով, դժվարությամբ, պարզել Ֆրանսիայի բուն էությունը (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների, բազմաթիվ ձախերի շարքերում*):

Ուրեմն, պարոնայք, չնայած թվացյալ բարդությանը, ամենևին դժվար չէ մի բանի բառով բացահայտել ու բացատրել Ռուսաստանի քաղաքականությունը Արևելքում: Այնպես, ինչպես Սավուայի արքայատոհմը իտալական հեղափոխական շարժումն օգտագործեց իր սահմանները ընդարձակելու համար ու միայն հաղթանակից հետո ճնշեց, այնպես, ինչպես Գերմանիայում ֆոն Բիսմարկը Պրուսիայի գերիշխանությունն ամրապնդելու նպատակով որոշ ժամանակ սատարեց գերմանական հեղափոխությունը,

անգամ համընդհանուր ընտրական համակարգ սահմանեց, ապա, Հոհենցոլերների արքայատոհմի ձեռքին գործիք դառնալուց հետո ճնշեց, ճիշտ այդպես, պարոնայք, Ռուսաստանը մի ամբողջ դար իր սահմանները ծավալելու, գերիշխանությունն ամրապնդելու համար բորբոքում է բոլոր սլավոնների հեղափոխական զգացումները, Թուրքիայի ճնշված՝ հեղափոխական ու ազգայնական խմբավորումների զգացումները: Այդ պատճառով էր Ռուսաստանը Լեհաստանում սատարում ճնշված գյուղացիների ապստամբությունը ազնվականության դեմ: Ահա այդ նույն պատճառով արդեն քսան տարի Ռուսաստանը Բալկաններում՝ Բուլղարիայում, Ռումինիայում, Սերբիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում հանդես է գալիս որպես սլավոնական մտայնության պաշտպան, իսկ Ալեքսանդր 2-րդը, 1876-ին, Մոսկվայում հավաքած իր պալատական մարշալներին և հավատարիմ ազնվականությանը քարոզում էր հանուն սլավոնական սրբազան դատի սրբազան պայքարի ելնել: Նույնը և Հայաստանում, պարոնայք, արտաքին գործերի պարոն նախարարը հենց նոր խոսում էր սադրիչների, հրահրողների մասին, բայց նա պետք է զգուշանա, նման արտահայտություններով կարող է վիրավորել չափազանց հզոր, չափազանց համբավավոր անձանց, որոնց հանդեպ խորին հարգանք է տածում: Բոլորիս հայտնի է, պարոն նախարարն էլ չի կարող հերքել, որ ռուս-թուրքական պատերազմից ի վեր, Հայաստանում ամենադժգոհ ազգային, ամենադժգոհ քրիստոնյա՝ բացառիկ գործոն տարրերը եղել են հենց ռուսների բարեկամները, եղել են կամավոր ռուսական բանակի շարքերն անցած հայ մարտիկներ՝ այն էլ Թուրքիայի դեմ մղվող պայքարի

ընթացքում: Բայց, ահա, արդեն մի քանի տարի է Ռուսաստանը նկատում է, որ իր համար էլ է վտանգավոր դառնում այդ կերպ հեղափոխություն և անկախություն խաղալը: Նա նկատում է, որ Լեհաստանը, չնայած այդ երկրում պարբերաբար հեղվող արյանը, չնայած ռուսական գաղտնի ոստիկանության համակարգին, որը մեր կառավարության միջոցով իր հսկողությունը հասցրեց ընդհուպ Ֆրանսիայի լեհական գաղութը ... *(Ժափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում: Բողոք խորհրդարանի կենտրոնում ու աջակողմյանների շարքերում)*... Ռուսաստանը նկատեց, որ Լեհաստանը պահպանել է իր ինքնության հավատամքը և արդյունաբերական քաղաքների խոշոր արվարձաններում ազգային գաղափարախոսության ու ընկերվարական գաղափարախոսության միասնականություն է ստեղծվել, որը կարող է վտանգավոր դառնալ ապագայի համար *(նոր աղմուկ խորհրդարանի կենտրոնում ու աջակողմյանների շարքերում)*... Ամենակարևորը՝ Բեռլինի դաշնագրից հետո Ռուսաստանը նկատեց, որ բուլղար ժողովուրդը, որին ինքն էր իրավագորել, միտք չունի թուրքական լծից ռուսական լծի տակ անցնել: Ահա Ռուսաստանի բոլոր մտահոգությունների, դիրքորոշումների գաղտնիքը հայկական հարցում *(բողոք խորհրդարանի կենտրոնում ու աջակողմյանների շարքերում)*:

Հայկական հարցը երկու փուլ ունի՝ առաջինն սկսվում է Սասունի կոտորածներից ու հասնում է մինչև 1895-ի նոյեմբերի Կոստանդնուպոլսի ջարդը, երկրորդը՝ այդ օրերից ձգվում է մինչև այժմ: Ակնհայտ է՝ երկու փուլերում էլ Ռուսաստանը միայն մի մտահոգություն է ունեցել: Իշխան Լոբանովը¹¹, այն պահին, երբ մյուս գերտերությունների

դեսպանները նրան շտապեցնում էին միանալ իրենց, որ-
պեսզի սուլթանի վրա համատեղ լուրջ ճնշում գործադրեն,
խոսքը Կոստանդնուպոլսի և Փոքր Ասիայի մեծ կոտորած-
ներից առաջ, կոտորածները կանխելու համար գործնական
միջոցներ ձեռնարկելու մասին է, իսկ ավելի ուշ, երբ հարկ
էր լինում մի պատվիրակ ևս գալառ ուղարկել, որի ներ-
կայությունը թերևս սուլթանին արգելեր նորից արյուն հեղել,
իշխան Լոբանովը միշտ երկու պատասխան էր տալիս: Նա
նախ ասում էր՝ «Ես չեմ ուզում, որ Հայաստանը նոր
Բուլղարիա դառնա, որ ռուսահպատակ հայերը մեր դեմ
ուղղեն այն հաստատությունները, որոնք հնարավորություն
կունենան ստեղծելու թուրքական տիրապետության ներքո
գտնվող Հայաստանում» (*տարաբնույթ աղմուկ դահլիճում*),
ապա ավելացնում, որ հայկական շարժման շարքերում
հեղափոխականներ կան, որոնց ոչ մի դեպքում չի կարելի
անլուրջ վերաբերվել: Այնպես որ Ռուսաստանի քաղաքա-
կանությունը հայկական հարցում միշտ էլ սպասման,
ձգձգման քաղաքականություն է եղել: Միշտ էլ, այնպիսի
պահի, երբ Հայաստանը թուրքական բռնաճնշմամբ ձեռ-
քազատվել է իր բոլոր կորովի ազգայնական ու հեղափո-
խական տարրերից, և Ռուսաստանը հնարավորություն
ունեցել է առանց իր երկիրը վտանգելու, առանց անկախու-
թյան կամ հեղափոխության մանրէն ռուսական կայսրու-
թյուն մտցնելու, հովանավորության տակ վերցնել Հայաս-
տանին, չի միջամտել, ոչինչ չի արել (*բողոքի շշուկներ
խորհրդարանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում,
ձախակողմյանների բազմաթիվ շարքերում: Չայներ ձախ
ծայրահեղականների շարքերից՝ «Ճիշտ է, շատ ճիշտ է»*):
Ո՛չ, դահլիճի հայրենասիրական թվացող բողոքի շշուկները

մեզ՝ ճշմարտությունն ասելուն չեն կարող խանգարել
(*բողոքի նույն շշուկները նույն շարքերում*): Հենց այդ
ճշմարտության՝ միակ ճշմարտության պատճառով է, որ
արտաքին գործերի պարոն նախարարը չի կարողանում
հրատարակել «Դեղին գիրքը»¹², որովհետև այնտեղ է
բացահայտվում Ֆրանսիայի պատասխանատվությունը:

Ֆրանսիայի պատասխանատվությունը

Պարոնայք, պարոն Կլեմանսոն¹³ մի քանի շաբաթ
առաջ հրապարակած փայլուն հոդվածում հավաստում է,
որ անցած դարում, նման կոտորածների կապակցությամբ
ամբողջ Եվրոպան չի վարանել կոչով դիմել Ֆրանսիային, և
Ֆրանսիան անմիջապես արձագանքել է:

ԴԵԼԿԱՍԵ – Իսկ 1870-ից¹⁴ հետո՞:

ԺՈՐԵՍ – Ես չեմ ուզում այստեղ ազգայնամոլական
որևէ արտահայտություն բույլ տալ, բայց պիտի պնդեմ, որ
արդեն մի դար է, այն ժամանակից ի վեր, երբ ֆրանսիա-
կան հեղափոխությունը ֆրանսիացիներին ու մյուս բոլոր
ժողովուրդներին իրավահավասար հռչակեց, Ֆրանսիան չի
կարող, սա իրեն պատիվ է բերում, որովհետև ինքն է հղա-
ցել, միայնակ ստանձնել հիմնարար առաջընթացի նախա-
ձեռնությունն ու արդարության գաղափարի զարգացումը:
Այնուամենայնիվ նա իրավունք ուներ իր ղեկավարների
միջոցով պահանջել, մի բան, որ հնարավոր չեղավ՝ այն
երկրում, որի նկատմամբ պարտավորություններ էր
ստանձնել, կանխել երկու տարի, երեք տարի անընդհատ
շարունակվող զարհուրելի նախճիրները, որոնց զոհերի
թիվը պաշտոնական տեղեկագրերը հասցնում են 30 000-ի՝

ավելացնելով, որ դա իրականության մեկ երրորդն է միայն: Հենց այդ անհնարինությունը կոտորածները տարածեցին ու ծավալեցին, բացի դրանից որոշակի փաստաթղթերի վրա հենվելով կարելի է իմանալ, թե ինչպիսի՞ն է եղել Անգլիայի արտաքին քաղաքականությունը, ինչպիսի՞ն է եղել Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, մինչդեռ Ֆրանսիային ոչ ոքի համար պարզ չէ (*Ժափահարություններ ծախս ծայրահեղականների շարքերում*).

Այո՛, բար լռություն է, լռում է մամուլը, որի մի մասը, դա ես գիտեմ, լռելու համար ուղղակի կամ անուղղակի վճարվում է (*Ժափահարություններ ծախս ծայրահեղականների շարքերում, ծախսակողմյանների բազմաթիվ շարքերում*), լռում են մեծ լրագրերը, որոնց գլխավոր ներդնողները օսմանյան խոշոր ձեռնարկությունների շահառուներն են, բայց հատկապես լռում է Ֆրանսիայի կառավարությունը: Ինչպե՞ս պատահեց, որ այդքան արյուն հոսելուց, այդքան ավերներից ու նախճիրներից հետո, Ֆրանսիայի կարգախոսներն ու մարդու իրավունքները ոտնահարվելուց հետո ձեր բերաններից ոչ մի ճիշտ չպոռթկաց, ձեր խղճից ոչ մի ձայն չհնչեց, և դուք մնացիք համր, հետևաբար զանգվածային բնաջնջմանը մեղսակից... (*Հարունակական շշուկներ, բուռն ընդվզումներ դահլիճի մեծ մասում: Ժափահարություններ ծախս ծայրահեղականների շարքերում*):

ՆԱԽԱԳԱՀ – Պարոն Ժորես, դուք իրավունք չունեք հանրապետության կառավարությանը վիրավորական արտահայտություններ ուղղելու, իրավունք չունեք ասելու, որ մեղսակից է եղել նախճիրին: Հորդորում եմ հետ վերցնել ձեր այդ խոսքերը (*Ժափահարություններ դահլիճի կենտրոնում, ծախսակողմյանների շարքերում*).

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ – Նրա մեղադրանքն ուղղվում է իրար հաջորդած մեր բոլոր կառավարություններին:

ԺՈՐԵՍ – Արտաքին գործերի պարոն նախարարն ըստ էության ուզում է հաստատել իմ անկողմնակալությունը, դրանով իսկ ինձ ձերբազատել պարոն նախագահի հիշատակած խոսքերը հետ վերցնելուց: Նա իրավացի է՝ իմ մեղադրանքներն ուղղված են նաև նախորդ կառավարություններին...

ՆԱԽԱԳԱՀ – Ո՛չ և ոչ, պարոն Ժորես, ինչ վերաբերում է ինձ, ես ձեր խոսքերն ավելի ծանր եմ համարում, եթե ուղղվում են մեր բոլոր կառավարություններին և Ֆրանսիային վերագրում են մի հանցակցություն, որը նա երբեք չի կատարել (*բուռն ծափահարություններ*):

ԺՈՐԵՍ – Պարոնայք, եթե ես կարողանայի մույնպիսի հեշտությամբ վերջին երեք տարիների պատմությունից վերացնել այն պատասխանատվությունը, որ ընկնում է մեր բոլորի վրա, ինձ համար էլ հեշտ կլինեք, պարոն նախագահի ցանկությանն ընդառաջելու համար հետ վերցնել իմ խոսքերը, որոնք իմ համոզվածությունն են արտահայտում: Այո՛, եթե կարողանայի, վաղուց կանեի (*ծախս ծայրահեղականների շարքերից՝ «Ճիշտ է, շատ ճիշտ է», շշուկներ խորհրդարանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում*).

Ո՞րն է ուրեմն լուծումը, որ դուք կարող եք, դուք պե՛տք է կայացնեք այս դառնակսկիծ հիմնահարցի վերաբերյալ: Լուծման երեք տարբերակ կա, պարոնա՛յք:

Կամ պահպանել statu quo-ն¹⁵, այսինքն մեկը մյուսին հաջորդող անիմաստ շաղակրատությունների ու սուլթանի բարեփոխումների ձգձգման իրավիճակը, քանի որ նա հա-

մոզվել է՝ Եվրոպայի առերևույթ դաշնության ներքո սքողված են ներքին նախանձախնդրություններ ու հակակրանքներ:

Կա ևս մի լուծում, որն ինձ թվում է, դուք հիշատակեցիք, արտաքին գործերի պարոն նախարար: Այն եվրոպական համագործակցությունն է, որին ուղղություն է տալիս ռուսական քաղաքականությունը: Քիչ առաջ ես բացատրեցի, թե ինչու եմ այդ լուծումն անխոհեմ ու վրդովեցուցիչ համարում:

Կա, սակայն, մաս երրորդ տարբերակը:

Քանի որ Եվրոպան բացահայտել է իր գործելու անկարողությունը, քանի որ անդամալուծվել է ամենատարբեր բնույթի նախանձախնդրություններով ու հավակնություններով՝ այն աստիճանի, որ իր իսկ շեմին սահմնեցուցիչ ոճիր թույլ տվեց ու կանխարգելելու համար մատն անգամ չչարժեց, մնում է ամբողջ աշխարհի աշխատավորների առջև խոստովանել հնամենի Եվրոպայի կառավարական այս ձախողումը (*բուռն ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*): Այո՛, դուք՝ ներհակ ազգային շահերով տարանջատված կառավարություններդ, նույնիսկ ի վիճակի չեք կատարելու քաղաքակրթության ու քրիստոնեության տարրական, հնամենի առաքելությունը: Քիչ առաջ, պարոն դր Մյունը պերճախոսությամբ էր անդրադառնում այն պարտականություններին, որ Ֆրանսիան ստանձնել է քրիստոնեական դարավոր համայնքների նկատմամբ: Իհարկե, մեծ հաշվով, ըստ մեզ, դա միակ պարտականությունը չէ: Ես պարոն Հյուբբարից թույլտվություն եմ խնդրում նրան ասելու, որ միայն հայերի մեծ մասի քրիստոնյա լինելու համար չէ, որ Ֆրանսիան ձեռնպահ չմնալու արդարացուցիչ պատճառներ ունի (*ձախ ծայրահեղականների շարքերից՝ «Ճիշտ է, շատ ճիշտ է», շշուկներ խորհրդա-*

րանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում):

Առկա է շատ ավելի կարևոր ու նշանակալի իրողություն՝ հենց այդ Արևելքը, որտեղ քրիստոնեությունը 18 դար է արդեն հաստատվել է՝ հռչակելով համընդհանուր ներդաժնություն ու համընդհանուր խաղաղություն, կրկնում եմ՝ հենց այդ Արևելքը և այնտեղ՝ Տրապիզոնից մինչև Երուսաղեմ ավելոծող հիմնահարցերը ակնբախ դարձրին հինավուրց՝ քրիստոնյա ու դրամատիկական Եվրոպայի բարոյական պարտությունը (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում, նոր շշուկներ խորհրդա-րանի կենտրոնում, աջակողմյանների շարքերում*): Ուրեմն, քանի որ կառավարությունները, նրանց հակասությունների պատճառով տարանջատված ազգերը անկարող են տարրական միասնականության հանգել, կանխել բարբարոսության խժոժությունները, հանդես գալ Եվրոպայի անունով և Եվրոպայի պատասխանատվությամբ, անհրաժեշտ է, որ ամենուր եվրոպական պրոլետարիատը ստանձնի այս առաքելությունը («Պահ, պահ, պահ»՝ բացականչություններ կենտրոնից և աջակողմից):

Անհրաժեշտ է, որ ամենուր պրոլետարներն արտահայտեն իրենց ցասումն ու կամքը, ստիպեն թշվառ գերտերություններին, որոնք, միմյանց չհռչակելու համար թույլ են տալիս, որ մի ամբողջ ժողովուրդ խողխողվի, կատարել իրենց տարրական մարդկային պարտականությունը՝ այնպիսի միասնականությամբ, որը կկանխի ցանկացած ընդդիմություն ու ընդհարում, կնպաստի խաղաղության գործին, արդարության գործին: Այդ է արտահայտում մեր բանաձևը, որը մենք հանձնել ենք պարոն նախագահին, որը և ես խորհրդարանին խնդրում եմ քվեարկել (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*)¹⁶:

1897 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԵԼՈՒՅԹԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ¹⁷

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն
Ժորեսին:

ՊԱՐՈՆ ԺՈՐԵՍ – Պարոնայք, ես շատ լավ եմ հաս-
կանում, որ մեր գործընկերները արտաքին գործերի պարոն
նախարարի¹⁸ հայտարարությունների կապակցությամբ
շարքից շարք իրենց տպավորությունները փոխանակելու
կարիք են զգում: Ես նրան պատասխանելու թույլտվու-
թյունն եմ խնդրում: Ինքս չեմ անդրադառնա փոքր ինչ
անսպասելի դրվատանքներին, որ [նախարարն ինքը] ձեզ
հայտնի ցավալի իրադարձություններից հետո ուղղեց
եվրոպական դիվանագիտությանը, բայց ձեզ խնդրում եմ,
պարոնայք, մի տրվեք այն կեղծ տպավորությանը, որ ջա-
նում են ստեղծել ձեր մտապատկերում:

Այս պահին դուք նախ սահմանելու եք անցյալի պա-
տասխանատվությունները (*տարբեր արձագանքներ դահ-
լիճում*): Խոսքը Հայաստանի կոտորածների մասին է, որից
հետո միայն ես ուզում եմ հարցնել, թե մոտ ապագայում,
թեկուզ հենց հիմա, քաղաքական ո՞ր դիրքորոշումն է ամե-
նից ավելի համապատասխանում Ֆրանսիայի շահերին:

[...]

Պարոն նախարար, դուք մեզ ասացիք, որ պետք է ընտ-
րություն կատարենք: Դուք մեզ ասացիք, որ ձեր համա-

կարգը քննադատելն ու տապալելը բավարար չէ, որ մենք
պետք է մերը հակադրենք: Մենք մեր համակարգը վաղուց
ենք ձեզ ներկայացրել: Խոսքը պարզապես այն նույն
համակարգի մասին է, որը տարիներ ի վեր ձեր Կոստանդ-
նուպոլսի դեսպանն¹⁹ է ձեզ հուշում: Մեր համակարգը թույլ
չտալն էր, որ Օսմանյան կայսրության ազգաբնակչության
վերքերը խորացնեն, փորփրեն, ընդիույ մահացու ջղա-
ձգումների հասցնեն: Մեր համակարգը մարդկության,
ինչպես նաև Ֆրանսիայի ձայնը լսելի դարձնելն է, որը
մարդկության ձայնից չպետք է զանազանվեր, ժամանակին
լսելի լիներ (*ծափահարություններ ձախ ծայրահեղական-
ների, ինչպես նաև ձախերի տարբեր շարքերում*):

Դուք սպասեցիք: Դուք տարիներ շարունակ ստացաք
ձեր հյուպատոսների զեկուցագրերը, ձեր դեսպանների զե-
կուցագրերը, որոնք հաղորդում էին ջարդերի ու հազարա-
վոր զոհերի մասին: Դուք ոչինչ չարեցիք, օգտակար ոչինչ
չկարողացաք անել: Եվ դուք, որ ի վիճակի չեղաք կանխել
Օսմանյան կայսրության այդ տարածաշրջանի անկարգու-
թյունները, սահմանափակել խռովությունները, դուք ձեզ
գովում եք, որ նույն քաղաքականությամբ, նույն սուլթանի
հետ նույն հաճոյակատարությամբ կլուծեք խնդիրը:

Սակայն, արտաքին գործերի պարոն նախարար, մի
մոռացեք, որ տվյալ պահին մի մեծ թուլություն ունեք: Ինչ էլ
որ անեք, սուլթանը ձեզ չի հավատալու: Արդեն երեք տարի
նա վարժվել է կոտորածներ սանձազերծելու պահին ձեզ
լուռ տեսնել: Արդեն երեք տարի վարժվել է, որ իրեն արդա-
րացնելու համար մեղմացուցիչ պատճառներ գտնեք: Սուլ-
թանը գիտի նաև, որ այն ֆրանսիացին, որը ձեզ է ներկա-
յացնում Կոստանդնուպոլսում, հենց ձեզնից վճռական,

գործնական միջամտություն էր խնդրում, դուք այն գործողությունների փոխարեն, որոնք թերևս սուլթանին կկանխեին, սովորական, ձևական խոսքերով եք գոհանում *(ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*։ Հետևաբար, եթե դուք վաղը սուլթանի հետ խոսեք բարենորոգումների մասին, պահանջեք, որ ամբողջ կայսրությունում իրագործի այն բարենորոգումները, որոնք դուք չկարողացաք պարտադրել Հայաստանի համար, կհիշի ձեր նախկին խոսքերի սնանկությունը, ձեր նախկին դիրքորոշման հաճոյակատարությունն ու մեղսակցությունը։ Կհիշի, որ երեք տարի փաստորեն գործել եք նրա օգտին և մի անգամ ևս կասի՝ «Թողնենք, որ փոթորիկն անցնի», և նա ավելի իրավացի կլինի դա ասելու, քան դուք, քանի որ սուլթանին դատապարտելու, բարենորոգումները պարտադրելու համար Եվրոպան համախմբելու ունակ չեղաք, իսկ այժմ փորձում եք դրան հասնել, որպեսզի Թուրքիայից ու սուլթանից վրեժ լուծեք՝ իբր Կրետեի ազգաբնակչությանը ազատագրելու նպատակով Հունաստան ներխուժելով *(նոր ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*։

Այն համակարգը, որ արտաքին գործերի պարոն նախարարը ձեզ խնդրում է իրավագործել, նույնն է, որը երեք տարի շարունակ գործադրվել է, այսինքն՝ բռնաճնշումների իրականությունը, կոտորածների իրականությունը սքողող անարդյունք ջանքերի, անարդյունք խոսքերի, անարդյունք սպառնալիքների, անարդյունք խոստումների բեմականություն *(ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*։ Կրկնում եմ, պարոն նախարար, որ ձեր դիրքորոշման, անխոհեմ դիրքորոշման պատճառով վրա հասավ պատերազմի արհավիրքը։ Դուք ինքներդ օսման-

յան կայսրության բոլոր ժողովուրդներին դաս տվեցիք։ Այո՛, եթե այդ ժողովուրդները տեսնեին, որ դուք ժամանակին, լրջորեն եք միջամտում, միջամտում եք խելամիտ ու արդյունավետ ձևով՝ նրանց շղթաները փշրելու կամ վերքերն ամոքելու համար, այդ ժամանակ, այո՛, նրանք թերևս համբերատարությամբ սպասեին բարենորոգումների իրագործմանը, ու խաղաղությունը, ամենայն հավանականությամբ, կշարունակվեր։ Բայց ամբողջ ձեր դիրքորոշումը, ամբողջ ձեր գործունեությունը, ամբողջ ձեր քայլերը այդ ժողովուրդներին սովորեցրին, որ մինչև պատերազմ չբռնկվի, խռովություն, արկածախնդրություն չսանձագերծվի, Եվրոպայից ոչինչ հուսալ չի լինի։ Ահա թե ինչու ձեր ներկայությունն այստեղ օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար շարունակում է նշանակել, որ իրենց միակ հույսը ուժն է։ Ուստի դուք բուն պատերազմի կուսակցությունից եք, հենց պատերազմի կուսակցությունից եք, դուք չեք կարողանա ո՛չ փրկել, ոչ էլ պահպանել խաղաղությունը *(երկարատև ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*։ Շշուկներ տարբեր շարքերում)։

1897 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԵԼՈՒՅԹԸ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ²⁰

ՊԱՐՈՆ ԺՈՐԵՍ – Այս պահին ես չեի համարձակվի ավելացնել խորհրդարանի և անձամբ իմ հոգնությունը, եթե Ազգային Ժողովի նախագահին²¹ սույն պատասխանով հակադրվելը պարտքս չհամարեի: Ազգային Ժողովի պարոն նախագահը խոսելով միջազգային այն դերի մասին, որ աշխարհում պիտի ստանձնի հանրապետական Ֆրանսիան, հարցին նոր ուղղվածություն հաղորդեց, իսկ արտաքին գործերի պարոն նախարարը²² նրանից առաջ ասաց, որ եթե անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել կրետական հարցը, նույնքան անհրաժեշտ է ընդհանուր հայեցակարգ մշակել, որով տվյալ պահին առաջնորդվեր Ֆրանսիայի միջազգային քաղաքականությունը:

Իրականում, պարոնայք, ինձ թվում է՝ միայն կրետական հարցի կապակցությամբ չէ, որ դուք պիտի արտահայտվեք այս երեկո, այլ տվյալ պահին մեր արտաքին քաղաքականության բոլոր ընդհանուր ուղղությունների (տարբեր արձագանքներ դաժկհում):

[...]

Երբ սուլթանը տեսնում է, որ երեք տարի շարունակ Եվրոպայի մեղսակից նիրհի շնորհիվ անպատիժ իրագործում է այն կոտորածները, որոնք ամենայն հավանականությամբ իրենց նախադեպը չունեն մարդկության պատմու-

թյան վերջին դարերի ընթացքում, երբ նա տեսնում է, որ Եվրոպան սահմռկած, ուշացած զարթնում ու փոխանակ սուլթանի զոհերի կողմը շրջվելու, նրանց վերքերը ամոքելու... (աղմուկ կենտրոնում) փոխանակ շրջվելու բռնաճնշված ժողովուրդների կողմը, անկախության համար մղված պայքարում նրանց սատարելու, նախ և առաջ, որպես անդրանիկ քաղաքական քայլ իր շահերն է հետապնդում, սուլթանը համոզվում է, որ Եվրոպան իր ձեռքերում է, հետը, ինչպես ուզի, այնպես էլ կվարվի (ծափահարություններ ծախ ծայրահեղականների շարքերում): Ի՞նչ է տեսնում նա արդեն երեք շաբաթ: Ինչպե՞ս եք վաղը գնահատելու նրա սեփական հզորությունը, ինչպե՞ս եք ներկայացնելու սեփական անպատժելիությունն ու սեփական ոճրագործությունը: Օսմանյան կայսրությունում ապրում էր մի հնազանդ հայ ազգաբնակչություն: Մոռացության մատնվեց: Ապրում է կրետացի մի փոքրիկ ժողովուրդ, որն ընդվզել է, իսկ Եվրոպան շտապում է օգնել սուլթանին, որպեսզի շրջափակի Կրետե կղզին ու ջախջախի բռնաճնշված ժողովրդին: Եվ դուք ուզում եք, որ վաղը, երբ պարոն Դընի Կոշենի խորհուրդներին անսալով, գնաք սուլթանից բարենորոգումներ պահանջեք, ձեզ լո՞ւրջ վերաբերվի: Հենց այս պահից դուք նրան ներարկել եք Եվրոպայի անպատժելիությունը:

Ավելին կա: Մինչ սուլթանը, արյունոտ նախճիրներից հետո, կփորձեր առաջին բարենորոգչական քայլերով վերականգնել իր վարկն ամբողջ աշխարհում, դուք նրան Կրետեում ձեր համագործակիցը դարձրիք: [...] Այսպիսով, դո՛ւք եք Արևելքում սփռում պատերազմի ամենավտանգավոր սերմը: Այն, ինչ ես ասում եմ, կեղծ մարգարեություններ

չեն: Թվում էր թե սուլթանը, վերջապես տեղյակ դառնալով Եվրոպայի ուշացած վրդովմունքին, կանխելու էր հայերի կոտորածները, դրա համար էլ արտաքին գործերի պարոն նախարարը այս սրահում տեղի ունեցած հարցապնդումների հաջորդ օրը գրել էր նրան. «Պետք չէ, որ այլևս գեթ մի կաթիլ արյուն հեղվի»: Սուլթանն, այսպիսով, կարողացավ ձեր վստահությունը վերաշահել, այլևս ձեր կասկածը չի հարուցում: Նա անսպասելիորեն նկատեց, որ դուք դարձյալ մնում եք իր լավագույն հենարանն ու լավագույն բարեկամը: Եվ ահա, հենց այս պահին, երբ մենք խոսում ենք այդ ամենի մասին, հայկական ջարդերը վերսկսվում են, հայ ազգաբնակչությունը նորից կոտորվում է, այսինքն սուլթանը մեզ ոչ մի ակնթարթ թույլ չի տալիս մոռանալ, թե ինչպիսի համագործակցության հետ եք դուք համակերպվում, երբ ընդունում եք օսմանյան գորամիավորումների՝ Կրետեն խաղաղեցնելու գործողությունները (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*):

Մեր խորհրդարանը գիտե, թե այս պահին ի՞նչ է անում, հանուն ինչի՞ է քվեարկում: Այս պահին, այն ինչ ուզում են, որ նա հաստատի, խաղաղությունը չէ: Եթե անգամ խաղաղությունն է, ապա մերը՝ մեր սահմանափակ խաղաղությունը, եսամոլական խաղաղությունը: Բայց դա միաժամանակ արյունահեղ խաղաղություն է, խաղաղության ծաղրանմանակումն է, խաղաղության ամենառազմատենչ ձևն է (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*):

Ո՛չ, պատերազմի սարսափը, ամեն կերպ խաղաղությունը փրկելու բուռն ցանկությունը չէ, որ ձեզ մղում է թուրքամետ քաղաքականության: Նման քաղաքականու-

թյուն վարելու համար դուք ունեք երկու վճռական ու իրական պատճառներ, որոշակի պատճառներ, որոնք պետք է քննել այս ամբիոնից ու ամբողջ երկրին տեղյակ դարձնել:

Առաջին պատճառը, որին անդրադարձավ պարոն Գոբլեն²³, օսմանյան արժեթղթերի բաժնետերերի նյութական հզորությունն է (*առարկություններ դահլիճի կենտրոնում, ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում*), այն արժեթղթերի բաժնետերերի, որոնք փորձեցին երկրի քաղաքականությունը խառնել իրենց սեփական շահին և որոնք, նախ և առաջ ջանացին, նույնիսկ առանց բարենորոգումների, երկարած գել ներկա Օսմանյան կայսրության գոյությունը: Որպեսզի ձգձգեն օսմանյան պարտատոմսերի մարման ժամկետը նրանք իրենց տրամադրության տակ եղած հազար ու մի միջոցով, մասնավորապես այսօր վարվող քաղաքականությամբ, աստիճանաբար ազդեցին հասարակական կարծիքի վրա (*ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում, առարկություններ դահլիճի կենտրոնում*): Եթե անգամ իմ խոսքերի հարուցած որոշ աղմուկը խուլ ընդվզում է արտահայտում, հաստատ արտաքին գործերի պարոն նախարարը չի ժխտի, որ նման մտահոգություններն ու շահագրգռություններն են պայմանավորել մեր երկրի քաղաքականությունը, որովհետև հենց թեկուզ «Դեղին գիրքը» (*«Ճիշտ է, շատ ճիշտ է»՝ ձախ ծայրահեղականների շարքերից*), մեր կարևորագույն քաղաքական փաստաթղթերը ակնհայտ են դարձնում օսմանյան բաժնետերերի ազդեցությունը:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ – Պարոն Ժորես,

ճիշտ հակառակը, դուք գիտեք, որ իմ դեմ ելևմտական արշավանք է սկսվել: Դուք դա շատ լավ գիտեք:

ԺՈՐԵՍ – Արտաքին գործերի պարոն նախարար, ես չգիտեմ, պարտավոր էլ չեմ իմանալ ելևմտական արշավանքների, ինչպես նաև այն մասին՝ ձեր օգտի՞ն, թե՞ ձեր դեմ են գործում, և ձեզ խնդրում եմ հավատալ, որ երբ այս ամբիոնից ներկայացնում եմ մեր երկրի ընդհանուր վիճակի վերլուծությունը, երբեք մտքովս չեմ անցկացնում ձեր անձը խառնել նման բնության հարցերի, նման բնության տարակարծությունների: Կարծում եմ դուք չեք վիճարկի իմ՝ դիվանագիտական փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո որոշ գործընթացների վերաբերյալ բացահայտումներ կատարելու իրավունքը՝ գործընթացներ, որոնք դուք ամենայն հավանականությամբ օրինական, չափազանց շահեկան եք համարում, որոնք, մեզ համար, սակայն, ինչպես արևելյան, այնպես էլ այլ ավելի ընդհանուր, ավելի մարդկային շահագրգռություններում նույնքան ծանրակշիռ չեն թվում:

Արտաքին գործերի պարոն նախարար, դուք, պատասխանելով մեր [1896 թ.] նոյեմբերի 3-ի հարցապնդմանը, այս ամբիոնից հայտարարեցիք, որ Նիկոլայ ցարի²⁴ այցելությունը Փարիզ առիթ է եղել, որ մեր հանրապետության կառավարության ու ռուսական կայսրի միջև բանակցություններ ընթանան և արևելյան հարցի վերաբերյալ ընդհանուր, կարևորագույն որոշումներ կայացվեն: Այդ կապակցությամբ մենք առանձնակի պատրանքներ չէինք փայփայում: Քանի որ ռուսական կառավարության ղեկավարն ու ֆրանսիական հանրապետության ղեկավարները հանդիպել էին, բնական է, պիտի անդրադառնային հայկական ահասարսուռ նախճիրներին, վերջ տալու միջոցներ,

վերսկսումը կանխելու ուղիներ որոնելին: «Դեղին գիրքը»²⁵ վկայում է, սակայն, խոսքը արտաքին գործերի պարոն նախարարի՝ իր ենթականերին ուղղված ճեպագրի մասին է, որ երկու ժողովուրդների այդ պաշտոնական հանդիպման ընթացքում այլ բնության շահեր են քննարկման, բանակցությունների նյութ դարձել: Ի վերջո արտաքին գործերի պարոն նախարարը ցարից ու նրա նախարարից ի՞նչ զիջողության է արժանացել: Խոստում, որ Ռուսաստանը կմասնակցի օսմանյան պարտքի տնօրինմանը այն կազմակերպությունում, որտեղ ինքը մինչ այդ ներկայացված չէր: Այսինքն դա խոստում էր այն մասին, որ Ռուսաստանի ստորագրությունը երաշխավոր կդառնա օսմանյան պարտատոմսերի բաժնետերերի համար, եթե մինչև անգամ կայսրությունը տրոհվի կամ այլ ցնցումների ենթարկվի:

Ճիշտ է, իհարկե, նաև այն, որ մի քանի օր անց դուք Սանկտ-Պետերբուրգից տեղեկացաք, որ ռուսական կառավարությունը ավելի լրջորեն խորհրդածելով, ավելի լրջորեն իրազեկվելով, չի ցանկացել Ռուսաստանի ինքնիշխանությունը ենթարկել օսմանյան ելևմտական պատասխանատվություններին և հրաժարվել է իր այն միակ խոստումից, որ ձեզ տվել էր Փարիզում: Ուստի ես լիովին իրավունք ունեմ ասելու, որ երբ ամենակարևոր դիվանագիտական փաստաթղթերում փնտրում ենք հանդիպման տոնախմբության, որտեղ մեծ պատրանքների կողքին ազգային մեծ հույսի թրթիռը կար, քաղաքական հանրագումարը և գտնում ենք միմիայն օսմանյան բաժնետոմսերի երաշխավորության մասին նախորդ, ապա նաև անարդյունավետ խոսակցություն, կրկնեմ՝ ես իրավունք եմ ունենում ասելու, որ ելևմտական շահերը ունեցել ու այժմ էլ ճնշող ազդեցություն

են ունենում մեր արտաքին քաղաքականության արևելյան հարաբերություններում *(աղմուկ կենտրոնում, ծափահարություններ ձախ ծայրահեղականների շարքերում)*:

Մի ուրիշ ազդեցություն էլ կա, որ այժմ ծանրացել է Եվրոպայի, մեր ընդհանուր գործունեության վրա: Դուք, արտաքին գործերի պարոն նախարար, խոսեցիք Եվրոպական Խորհրդի²⁶ մասին: Բայց դուք շատ լավ գիտեք, ինքներդ էլ խոստովանեցիք, որ Խորհուրդն ու թվացյալ միասնականության քողը թաքցնում են խիստ տարբեր քաղաքականություններ, խիստ հակընդդեմ միտումներ: Կա մի ժամանակաշրջան, հայկական ջարդերի մի ամբողջ ժամանակաշրջան, երբ որոշ ժողովուրդներ տարբեր, ուրիշ ժողովուրդներ էլ բոլորվին այլ քաղաքակալություն էին նախընտրում: Ուստի, ես ձեզ հարց եմ տալիս՝ արդյո՞ք Եվրոպական Խորհրդում հանրապետական Ֆրանսիայի ազդեցությունն այսօր բավականաչափ զգալի է [...]:

Պարոնայք, դուք հավակնում եք Եվրոպական Խորհրդում մեզ համար այլընտրանքի, խզման, անգամ այն ամենից հրաժարվելու տարբերակ գտնել, որը մինչև այժմ եղել է Ֆրանսիայի ավանդական քաղաքականությունը [...]: Ինձ իրավասու եմ համարում ասելու, այժմ ձեզնից է կախված ոչ թե Եվրոպական Խորհրդից հրաժարվելը, այլ այնտեղ մարդասիրության ու ազատության քաղաքականություն ներմուծելը, որոնք բացահայտորեն ֆրանսիական արժեքներ են:

[...]

Պարոնայք, չնայած ձեր հակադրմանը, ես ցույց տվեցի, որ դուք եք հարուցում պատերազմի վտանգը: Ես ցույց տվեցի, որ առանց Եվրոպական Խորհրդից հրաժար-

վելու, դուք, հավատարիմ մնալով Ֆրանսիայի ավանդույթներին, կարող եք Խորհրդին այլ ուղղվածություն հաղորդել: Նույնիսկ ցույց տվեցի, որ դուք, եթե ավելի մեծ վստահություն տաժեիք հանրապետական Ֆրանսիայի ողջախոությանը, կարող էիք ձեր ռուս դաշնակցից այլ քաղաքականություն կորզել:

Դուք դա չուզեցիք, դուք երեք տարի, ձեր սխալներով, սուլթանի ոճիքները չափազանց երկար հանդուրժելով, այս երկիրը փակուղի տարաք, ընտրեցիք հետադիմության ու բռնության քաղաքականությունը, որն ի վերջո կդառնա պատերազմի և նսեմացման քաղաքականություն: Դրա պատասխանատվությունը միայն դո՛ւք եք կրում:

(Բռուն ծափահարություններ ձախ ծայրահեղականների, ձախերի տարբեր շարքերում: Բացականչություններ կենտրոնում):

ԺԱՆ ԺՈՐԷՍԻ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԺԵՒՐՈՒՄԸ

Վերջաբանի փոխարեն

«Մենք հասել ենք այնպիսի ժամանակների, երբ մարդկությունն այլևս չի կարող ապրել իր նկուղում գտնուող խողխողուած ժողովրդի դիակով»:

ԺԱՆ ԺՈՐԷՍ

Ժան Ժորէսի 1896-1897 թթ. Ֆրանսական Ազգային Ժողովի առջև ունեցած ելոյթները ունին իրենց պատմական եւ այժմեական արժէքը: Անոնք իրենց արժանատի տեղը կը գրաւեն 19-20-րդ դարու սկիզբի Ֆրանսայի հայասէր շարժումին մէջ: Այդ ելոյթներուն մէջ կը բացայայտուին Սուլթանական, ինչպէս նաեւ Եւրոպական պետութիւններու պատասխանատուութիւնը Հայկական հարցին նկատմամբ: Իր խորհրդարանական միջամտութեամբ, Ժորէս կարգ մը երեւոյթներ կը դիտէ ընկերվարական եւ համամարդկային տեսանկիւնէ, երևան հանելով անոնց ետին թաղնուած տնտեսական եւ քաղաքական ազդեցիկ ուժերու շահերն ու անոնց դերակատարութիւնը Հայկական հարցի հոլովոյթին մէջ: Վերջապէս, անցեալի լոյսին տակ ակնարկ մը նետելով Ժորէսի անձնատրութեան ու մտքերուն եւ վերիմաստատրելով Եւրոպա-Թուրքիա-Հայաստան ներկայ յարաբերութիւնները, կ'ամբողջացնեն ելոյթներու մասին սոյն անդրադարձը:

Ֆրանսայի հայասէր շարժումը¹

Այս շարժումը երեսն կուգայ 19-րդ դարու երկրորդ կէսին եւ կ'երկարաձգուի մինչեւ 20-րդ դարու առաջին քառորդը, այսինքն՝ 1878-ի Պերլինի Վեհաժողովէն մինչեւ 1923-ի Լոզանի դաշնագիրը: Այդ ժամանակամիջոցին է որ Արեւելեան Հարցի մաս կազմող Հայկական Հարցը կը ստանայ միջազգային ճանաչում եւ կարեւորութիւն: Ան կը յայտնուի, ներքին իմաստով, Ֆրանսական Երրորդ Հանրապետութեան ընթացքին: Իսկ արտաքին իմաստով, կը զուգադիպի Եւրոպական գաղութարարութեան՝ Օսմանեան Կայսրութեան հետ խնդրայարոյց միջարարբերութիւններու բուլին, ինչպէս նաեւ Եւրոպական մեծ պետութիւններու միջեւ առկայ բազմազան մրցակցութեան ժամանակաշրջանին:

Ֆրանսայի այս հայասէր շարժումը կ'ընդգրկէ երկրին քաղաքական բոլոր հոսանքները, ծայրայեղ ձախէն մինչեւ ծայրայեղ աջը: Հոն են՝ արքայականն ու հանրապետականը, արմատականն ու ընկերվարականը: Ներկայացուած են կրօնական գլխաւոր բաժանումները՝ կաթոլիկն ու բողոքականը: Ներկայ են նաեւ ազատ որմնադիրները: Մասնագիտական առումով, յառաջապահ դիրքերու վրայ են հոգեւորականը, մարդկային իրաւանց գործիչը, գրողն ու պատմաբանը, հնագէտն ու արեւելագէտը: Ուսումնասիրողներ կը մատնանշեն այս շարժումին մէջ տարբեր, երբեմն ալ՝ հակադիր անձերու եւ հոսանքներու մէկտեղման դժուարութիւնները: Շարժումը իր գործունէութեան շրջագիծին մէջ կը ներառնէ քաղաքական ելոյթներ ու հանդիպումներ, մամլոյ յօդուածներ, պատմական ու մշակութային ուսումնասիրութիւններ, մարդասիրական ձեռնարկներ:

Հայկական կողմէն, այս շարժումին մէջ քաղաքական դերակատարութիւն կ'ունենան, որպէս մերթ՝ նախաձեռնող, մերթ՝

մասնակից, սեղմ թիով անհատներ եւ կազմակերպութիւններ: Անհատներէն յիշենք՝ Արշակ Չօպանեանն ու Պօղոս Նուպար Փաշան, իսկ կազմակերպութիւններէն գլխատարաբար՝ ՀՅԴ-ն:

Ֆրանսայի հայասէր շարժումը գործելով Ֆրանսական Երրորդ Հանրապետութեան ծիրին մէջ, բնականաբար ընթացած է անոր համակարգի առանձնայատկութիւններուն համաձայն: Օրէնսդիր մարմինը՝ Ազգային Ժողովը պետական վարչամեքենային կայունութեան վրայ ունեցած է վճռորոշիչ ազդեցութիւն, որուն համար կոչուած է «խորհրդարականներու հանրապետութիւն»: Արտաքին քաղաքականութեան պատասխանատուն թէւ եղած է նախագահը, սակայն դիւանագիտական կազմի եւ պետական բարձրաստիճան պաշտօնէութեան ազդեցիկ անդամները եղած են զայն վարողը: Ինչ որ կը յառաջացնէ հետեւեալ հարցադրումը: Ֆրանսական հանրային կարծիքը, որուն մաս կազմած է հայասէր շարժումը, ո՞ր աստիճանի եւ ի՞նչ արդիւնքով կարողացած է ազդել երկրին արտաքին քաղաքականութեան վրայ, Օսմանեան կայսրութեան հայկական բարենորոգումներու հարցին կապակցութեամբ:

Ժան Ժորէս եղած է այդ հայասէր շարժումի կառկառուն դէմքերէն մին: Ֆրանսական Ազգային Ժողովին առջեւ իր երեք ելոյթները կը նկատուին հայասէր շարժումին պատմական իրագործումներէն: Այս ելոյթներուն առնչութեամբ Ժորէս նաեւ յարաբերութեան մէջ եղած է Հնչակեան կուսակցութեան հետ²:

Ուսումնասիրողներ հայասէր շարժումի մղումներուն մէջ կ'առաջադրեն հաշուի առնել Ֆրանսայի ներքին թէ արտաքին քաղաքականութենէն բխող շահերը: Նոյն տրամաբանութեամբ, անհրաժեշտ կը դառնայ Ժորէսի ելոյթներու քննարկման ընթացքին այդ գործօնները չանտեսել:

Ժորէսի խորհրդարանական ելոյթներու վերլուծականը եւ Օսմանեան Թուրքիոյ 1894-1896 թթ. հայկական կոտորածներու պատասխանատուութեան հարցը

1878-ի Պերլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածով Օսմանեան կառավարութիւնը, այսինքն՝ Բ. Դուռը «...Հանձն է առնում հայաբնակ վայրերում անյապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ, ապահովել հայերի անվտանգութիւնը քրդերից ու չերքեզներից»: Ընդհակառակը, տեղի կ'ունենան 1894-1896 թթ. համատարած հայկական կոտորածները: Որո՞նք են պատասխանատուները: Արտաքին հրահրիչնե՞ր, ինչպէս կը մատնանշեն Եւրոպական եւ Ֆրանսական դիւանագիտական հանգամանակից շրջանակներ: Հայե՞րը պատասխանատու են պատահածին համար, ինչպէս կը տարածեն Օսմանեան կայսրութեան պետական շրջանակները: Ժորէս այս վերագրումներուն դիմաց երեւան կը հանէ Սուլթանական, ինչպէս նաեւ Եւրոպական պետութիւններու պատասխանատուութիւնը:

Սուլթանական պատասխանատուութիւնը

Սուլթանն է յղացողը, ղեկավարողն ու կազմակերպիչը կոտորածներուն: Հետեւաբար, անոնք ինքնական չեն պատահած: Օսմանեան պատկանելիութիւնը եղող այլ տարածքներու կորստեան ի տես, անկարող՝ արդարացի վարչաձեւ հաստատելու եւ ի վիճակի չլլալով այլեւս քրիստոնեայ բնակչութիւնները լուծի տակ պահելու, Սուլթանը կը դիմէր կոտորածներու միջոցով հայկական հարցէն ձերբազատուելու քաղաքականութեան, միաժամանակ վերջ տալով Եւրոպական միջամտութեան: Ահա՛ Ժորէսի բանաձեւումը Սուլթանական պատասխանատուութեան նկատմամբ:

Եւրոպական պատասխանատուութիւնը

Պերլինի Վեհաժողովի նոյն 61-րդ յօդուածով Եւրոպական վեց պետութիւններ հաւաքաբար պատասխանատուութիւնը կը ստանձնէին հետամուտ ըլլալու որ Օսմանեան կառավարութիւնը բարենորոգումներ իրականացնէր հայաբնակ վիլայէթներէն ներս: Ժորէս իր ելոյթին մէջ կ'անդրադառնայ անոր, սակայն իր միջամտութիւնը կը կեդրոնացնէ այն պետութիւններուն վրայ, որոնք Եւրոպական Խորհուրդէն ներս կը տանէին համաձայնեցում քաղաքականութիւն: Անոնք են՝ Անգլիան, Ֆրանսան եւ Չարական Ռուսաստանը: Չարտայայտուիլ Բրուսիոյ եւ Աւստրո-հունգարական պատասխանատութեան մասին, որոնք արդէն կը պատկանէին հակադիր կողմին:

Ժորէս, հիմնուելով Անգլիական աղբիւրներու հաստատումին վրայ, կը մատնանշէ թէ այս վերջինը, Ռուսաստանի դէմ իր վարած մի դարեայ պայքարի իբրեւ արդիւնք, եղած է Թուրքիոյ պաշտպանը եւ իր «*իսկ ապահովութիւնից դրդուած հրահրում է սաղրանքներ, անկարգութիւններ, օրինազանցութիւններ, որոնք ըստ էութեան կարող էին տեղի չունենալ*»: 1890-ական թուականներուն, Անգլիան, ստանձնելով Ռուսաստանի դերը, «*Եւրոպային ստիպում է միջամտել սուլթանի եւ նրա հպատակների հակամարտութեանը*», որուն ետին կրնան թագնուած ըլլալ յետին նպատակներ: Ահա՛ թէ ինչի մէջ կը ներկայանայ Անգլիոյ պատասխանատուութիւնը:

Ռուսաստան, որ նախապէս Օսմանեան կայսրութեան սլաւոնական ժողովուրդներու պաշտպանութիւնը ծառայեցուցած էր իր տարածքային ընդարձակմանն ու տիրապետութեանը, համիտեան կոտորածներու ժամանակ կը յայտնուի ոչ-միջամտողի դերին մէջ: Հայաստանը երկրորդ Պուլկարիա մը

չվերածելու մտավախութիւնը եւ հայ յեղափոխական կազմակերպութիւններու գոյութիւնը, որոնք իր ալ դէմ կրնային գործել, կը դառնան Ռուսական դիւանագիտութեան սպասողական եւ ձգձգումի քաղաքականութեան պատրուակը: Ժորէս այսպէս կը բնութագրէ Ռուսական պատասխանատուութիւնը:

Ինչ կը վերաբերի Ֆրանսական պատասխանատութեան, Ժորէս կը դատապարտէ Ֆրանսայի դիրքը, որ հետետողութեամբ Ռուսաստանի, լռութիւն պահելով պաշտօնական թէ մամլոյ մակարդակին, կը յայտնուի Սուլթանի բնաբնջման քաղաքականութեան մեղսակիցի վիճակին մէջ:

Եւրոպական միջամտութիւնը, Սուլթանի հակազդեցութիւնը եւ ճնշուած ժողովուրդներու ճակատագիրը

Հակադիր շահերու հետապնդում, անարդիւնք սպառնալիքներու, խոստումներու բեմականութիւն, անվճռականութիւն, անտարբերութիւն, լռութիւն՝ ահա՛ թէ Ժորէս ինչպէս կը նկարագրէ Եւրոպական պետութիւններու միջամտութեան տարբերակները՝ Օսմանեան պետութեան ներքին գործերուն մէջ:

Եւրոպական միջամտութեան դրսեւորումներու եւ հակադիր շահերու ճարտար օգտագործում, անպատժելիութեան ապահովութիւն եւ հալածանքներու շարունակութիւն՝ Ժորէս նման հետետողութեան կը յանգի երբ կ'անդրադառնայ Սուլթանի հակազդեցութեան:

Պաշտօնական Ֆրանսայի (ներառեալ՝ Եւրոպական պետութիւններու) «*քայլերը այդ ժողովուրդներին սովորեցրին, որ մինչեւ պատերազմ չբռնկուի, խռովութիւն, արկածախնդրութիւն չսանձագերծուի, Եւրոպայից ոչինչ յուսալ չի լինի: Ահա թէ ինչու ձեր (իմա՝ Եւրոպայի) ներկայութիւնը... օսմանյան կայսրութեան*

բոլոր ժողովուրդների համար շարունակում է նշանակել, որ իրենց միակ յոյսը ուժն է»:

Ահա՛ ժորէսի եզրակացութիւնը ճնշուած ժողովուրդներու ճակատագրին նկատմամբ՝ Եւրոպական միջամտութեան եւ Սուլթանի հակազդեցութեան ներքոյ:

Թագնուած շահեր՝ Եւրոպական պետութիւններու վարքագծին ետին

Հոս ժորէս ընկերվարականն ու գաղափարապաշտն է որ կ'արտայայտուի: Անգլիական դրամատիրութեան համաշխարհային ծաւալ ստացող կարիքները, օսմանեան արժէքութիւնը ֆրանսացի բաժնետէրերու նիւթական հզօր շահերը, եւ Ռուսաստանի ներգրաւումը այս գործընթացին մէջ՝ հիմնական տեղ կը գրաւեն երեք պետութիւններու՝ Օսմանեան կայսրութեան հետ ընթացող արտաքին յարաբերութիւններուն մէջ: «*Հիմաւորք՝ քրիստոնեայ ու դրամատիրական Եւրոպայի բարոյական պարտութեան*» դիմաց ժորէս կոչ կ'ուղղէ Եւրոպական «*պրոլետարիատին*» տէր կանգնելու հայերուն, որպէս Արեւելքի քրիստոնեայ ճնշուած հաւաքականութիւններէն մին:

Ժորէսի ելոյթները՝ Ֆրանսայի քաղաքական թատերաբեմի տեսակէտէն

Ֆրանսական Ազգային Ժողովը, Երրորդ Հանրապետութեան ընթացքին, կը պարզէ բուռն գաղափարական եւ շահերու պայքարի մը պատկերը: Դրամատիրական-արդիւնաբերական եւ գաղութարար հոսանքներուն հակադրուած են ընկերվարական, անիշխանական եւ բանուորական հոսանքները: Ժորէս, որպէս ընկերվարական մտաւորական եւ քաղաքական գործիչ,

կ'ընդդիմանայ դրամատիրական շահերու եւ գաղութարարութեան վրայ հիմնուած Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան: Ան կոչ կ'ընէ զայն խարսխել քաղաքական եւ բարոյական բարձրագոյն սկզբունքներու՝ արդարութեան վրայ, ցոյց տալով որ քաղաքականութիւնը սահմաններ չունի: «*Ժողովրդավարական բարոյականութիւնը բռնատիրոջան դեմ պայքարում է, որտեղ որ այն ի յայտ է գալիս*»:

Իր այս ելոյթներով, ժորէս ո'չ միայն Օսմանեան կայսրութեան հալածանքներուն եւ կոտորածներուն դէմ հայ բնակչութիւնն է որ կը պաշտպանէ, այլեւ կը ձգտի մղել Ֆրանսական արտաքին քաղաքականութիւնը մշակողները, որ զայն ձեւաւորեն ի'ր եւ իր քաղաքական հոսանքի պաշտպանած հիմունքներով:

Ժորէս այս դիրքորոշումը կը կառուցէ Ֆրանսական արժէհամակարգին ընդգրկուած արժէքներէն՝ մարդասիրութեան եւ ազատութեան վրայ, զանոնք հակադրելով արտաքին քաղաքականութեան մէջ լոկ շահի վրայ խարսխուած մօտեցումին՝ ներմուծելով որպէս անոր բաղադրիչ մասը:

Երբ ժորէս հայերու պաշտպանութիւնը կը համարէ խաղաղութեան համար մղուած պայքար, կը հիմնուի դրամատիրական հակադրուող շահերը պատերազմներու գլխաւոր դրդապատճառներէն մէկը համարող ընկերվարական մօտեցման վրայ:

Երբ ժորէս կոչ կ'ուղղէ Եւրոպական պրոլետարիատին անուրով Օսմանեան կայսրութեան լուծին տակ ճնշուող հայերը փրկել եւ պաշտպանել, դարձեալ անշեղօրէն կը հիմնուի ընկերվարական սկզբունքներու վրայ: Եւրոպայի ճնշուող եւ շահագործուող աշխատաւոր դասակարգի տարած պայքարը կը նոյնանայ Օսմանեան տիրապետութեան տակ ճնշուած եւ կեղեքուած հաւաքականութիւններուն՝ այս պարագային հայ բնակչութեան մղած պայքարին հետ: Համաձայն այդ հեռա-

նկարին, անոնք կը կրեն կրկնակի քաղաքական հետեւանքներ՝ Օսմանեան եւ Եւրոպական: Որո՞նք են այն հասարակական ուժերը, որ կը ճնշեն Եւրոպայի աշխատատրները եւ միաժամանակ կը ներգործեն Եւրոպական մեծապետական արտաքին քաղաքականութեան վրայ, եթէ ոչ նոյնինքն դրամատիրական-արդիւնաբերական եւ ելեւտական տիրապետող շրջանակները:

Այս ուղղութեամբ, բաւական խօսուի է Ժորէսի՝ աշխատատրներու անունով Ֆրանսական Ազգային Ժողովին ներկայացուած բանաձեւի քուէարկութեան արդիւնքը: 497 ներկայ երեսփոխաններու վրայ, 444 ձայն դէմ, 53՝ թեր:

Աւելի քան մէկ դար յետոյ, 2001-ին, Ֆրանսական Հինգերորդ Հանրապետութեան Ազգային Ժողովը միաձայնութեամբ ընդունեց հայերու ցեղասպանութիւնը: Քուէարկուած բանաձեւը քաղաքական հոսանքներու համամտութիւնը ստացաւ գաղափարախօսական երանգի բացակայութեան եւ Թուրքիոյ հանդէպ չէզոքութեան պայմաններուն տակ: Արդարեւ, բանաձեւը զանց կ'առնէ ցեղասպան պետութեան կամ անոր իրաւական ժառանգորդին անուան յիշատակումը:

Ժորէսի անձնատրութիւնը եւ մտքերը ³

Ժորէսի հայանպաստ ելոյթներու արժեւորումը ամբողջական պատկերով ըմբռնելու համար, անհրաժեշտ կը տեսնեմ նաեւ իր անձնատրութեան կարգ մը ցայտուն գիծերուն եւ մտքերուն անդրադառնալ: Այդ մտքերէն շատեր մնայուն արժէք կը ներկայացնեն, ո՛չ միայն ֆրանսացիին, այլեւ՝ ուրիշ ժողովուրդներու, նաեւ՝ Հայաստանի տակաւին ձեւատրուող քաղաքացիական հասարակութեան համար:

Հայրենասէր եւ միջազգայնական

Ժորէս միաժամանակ Ֆրանսացի հայրենասէր է եւ միջազգայնական: Ան, խաղաղութեան համար տարուած պայքարը անբաժան կը համարէ ազգի պաշտպանութեան եւ բանուորական հայրենասիրութեան համար մղուած պայքարներէն:

«Անցեալը լաւագոյնս ըմբռնելու համար, ապագայի մէջ շարունակել՝ անցեալի կենդանի ուժերու գործը» եւ *«Մենք, մեր շարժումը հաւատարիմ է անցեալի գործունէութեան, ինչպէս դէպի ծով հոսող գետը՝ իր աղբիւրին»*: Այս մտքերով, Ժորէս անցեալին մէջ տարուած սերունդներու պայքարի շարունակութիւնը կը տեսնէ իր ժամանակակից պայքարին մէջ:

Ժորէս, ակնարկելով բանուորական պայքարին, զայն անհայրենիք չնկատեր: Այդ պայքարը, առաջին հերթին, կը տարուի պետական կառոյցի ծիրին մէջ եւ ժողովրդավարական պայմաններու գոյութեամբ: Ազգութիւնն ու ժողովրդավարութիւնը անբաժանելի են, թէւ անոնց զարգացումը հաւասարագօր ընթացքով տեղի չունենար: *«Երբեք չէ եղած ժողովրդավարութիւն, թէկուզ թէ խաղաղ, որ երբեմիցէ հիմնուած ըլլայ եւ դիմանայ, եթէ այն չապահովեր ազգային անկախութիւնը: Երբեք չէ եղած ազգ, թէկուզ թէ զինուորական, որ կազմուած չըլլայ կամ փրկուած ըլլայ, առանց դիմելու ազատութեան յեղափոխիչ ուժերուն»*:

Մտածումի այս տրամաբանութեամբ, Ժորէս հակասութիւն չգտներ հայրենասիրութեան եւ միջազգայնականութեան միջեւ, ընդհակառակը, զանոնք կը տեսնէ որպէս զիրար հակակշռող՝ ընթացք: *«Մի քիչ միջազգայնակութիւն, զայն հայրենիքէն կը հեռացնէ. չափազանց միջազգայնակութիւն անոր ետ կը բերէ: Մի քիչ հայրենասիրութիւն, Միջազգայնական կը հեռացնէ. չափազանց հայրենասիրութիւն անոր ետ կը բերէ»*:

Ժորէսի ընկերվարութիւնը

Որպէս ընկերվարական, Ժորէս նախ ինքզինք կը նկատէ գաղափարական ժառանգորդը Ֆրանսական Յեղափոխութեան (1789 թ.) ընկերվարական թեւին: Ան միաժամանակ է՝ ժողովրդավար եւ յեղափոխական: Տարակարծիք է, սակայն, Պըրնշթայնի եւ ընկերվարութեան վերաքննիչ հոսանքին: Կ'ընդունի Մարքսի հիմնարար տեսութիւնները, սակայն անոնց նկատմամբ կը ձեւակերպէ իր մտակերպարը:

Ժորէս իր վերլուծումներու ընթացքին կը ձգտի գաղափարական կամուրջ ստեղծել պատմութեան նիւթապաշտ եւ տեսլապաշտ մօտեցումներուն միջեւ, որպէս նոյն իրականութեան զիրար լրացնող երեւոյթներ, որոնք միակ զարգացման եւ միեւնոյն իրականութեան մէջ իրարու կը համապատասխանեն: *«Եթէ կարելի չէ մարդը դուրս մղել տնտեսական յարաբերութիւններէն, կարելի չէ նաեւ տնտեսական յարաբերութիւններէն զանց առնել մարդը»:*

Ըստ Ժորէսի, մարդուն դէպի արդարութիւն ձգտումը կը դառնայ տնտեսական արդար կարգի համար տարուած պայքարի մղիչ ուժը: Մինչ դրամատիրութիւնը արգելք կ'ըլլայ որ մարդու այդ հիմնարար միտումները իրականանան, ընկերվարութիւնը թոյլ կուտայ որ անոնք ծաղկին: *«Մարդկութիւնը իրականութիւն կը դառնայ տնտեսական այն կերպերուն ընդմէջէն, որոնք հետզհետէ աւելի նուազ կը խորշին անոր կրած Արդարութեան գաղափարէն»:*

Դէպի արդար հասարակարգի՝ ժորէսեան տեսական այս ձեւակերպումը իր լաւագոյն արտայայտութիւնը կը գտնէ քաղաքական ազատագրութեան եւ հասարակական ազատագրութեան փոխներգործող գործընթացներու բնորոշման մէջ: Ան

կ'ըսէ հետեւեալը. *«Ընկերվարութիւնը կը հռչակէ թէ քաղաքական Հանրապետութիւնը պէտք է յանգի ընկերային Հանրապետութեան... Ինչպէս որ ազգը պէտք է գերիշխան ըլլայ քաղաքական, նոյնպէս ալ գերիշխան պէտք է ըլլայ տնտեսական կարգի տակ՝ խորտակելու համար անգործ դրամատիրութեան առանձնաշնորհումները»:*

...Ազգը տնտեսական գերիշխանութիւն հռչակելով, անհատներու տնտեսական ազատութիւնն է որ ստեղծած կ'ըլլայ, այնպէս ինչպէս իր քաղաքական գերիշխանութիւնը հռչակելով անհատներու քաղաքական ազատութիւնն է ստեղծած»:

Իբրեւ հետեւութիւն, ժողովուրդի մը համար՝ քաղաքական ազատութեան ամբողջացումը ընկերային-տնտեսական ազատութեան հանգրուանով, այսօր այժմեական է շատ մը անկախացած երկիրներու, նաեւ՝ Հայաստանի պարագային:

Վերջապէս, Ժորէսի համար աշխատատրոններու մղած պայքարը չհակասեր ժողովրդավարութեան: Քաղաքական ժողովրդավարութեան կ'ընկերանայ հասարակական ժողովրդավարութիւնը: Այլապէս ըսուած, ժողովրդավարութիւնը եւ ընկերվարութիւնը համահունչ են:

Եզրակացութիւն

Գոյութիւն ունին աշխարհաքաղաքական մնայուն գործօններ, որոնք ժամանակներէն, քաղաքական դերակատարներէն և վարչաձեւերէն անկախ կը յայտնուին միջ-պետական ու տարածաշրջանային յարաբերութիւններուն մէջ: Եւրոպա-Թուրքիա-Հայաստան երրեակը կը պարզէն այդ պատկերը:

Ժորէսի ժամանակակից Եւրոպան, իր կայսերապետական և դրամատիրական համակարգով, իր ազգութիւններու և բանու-

րական եռեւեփուն շարժումներով, յաճախ յայտնուած է հակա-
դիր ու մրցակցող իրավիճակի մէջ: Այս պատճառով, Օսմանեան
պետութեան նկատմամբ ան չէ կարողացած միշտ միացեալ
դիրքորոշում ունենալ եւ յայտնուած՝ զայն դարպասողի դերին
մէջ ու միաժամանակ ներազդած՝ անոր ներքին զարգա-
ցումներուն վրայ:

Կորսնցնելէ վերջ իր Պալքանեան տարածքներու հիմնա-
կանը, Օսմանեան պետութիւնը իր աշխարհագրական դիրքն ու
Եւրոպայի ներքին մրցակցութիւնը հնարաւոր կերպով օգտագոր-
ծած է կայսրութեան մնացեալը փրկելու համար: Սակայն, այս
բարդ իրավիճակը, կայսրութիւնը դրած է արտաքին միջամտու-
թիւններու ենթակայ դիրքի մէջ, իսկ ներքին ճակատի վրայ,
վարչական, ընկերա-տնտեսական, ազգային և կրօնական հա-
կասութիւններու սրումով, անկարելի դարձուցած՝ բարենորո-
գումներու իրագործումն ու հարցերու խաղաղ և արդար լուծումը:

Իսկ հայ ժողովուրդը, երեք կայսրութիւններու միջև բաժա-
նուած և առանց պետականութեան, կրած է այս միջազգային և
տարածաշրջանային իրավիճակին ներքին թէ արտաքին
հետեւանքները: Արդիւնք՝ ցեղասպանութիւն, չկայ Արևմտահա-
յաստանը. նօսրացած է անցեալի Պարսկահայքը. Արևելեան
Հայաստանը մասնատուած է և մասամբ՝ հայաթափ: Հայ ժողո-
վուրդը դարձած է աշխարհացրիւ: Այս պատկերը կ'ամբողջանայ
յետագային անկախ Հայաստանի ստեղծումով, հայկական
հողերու մէկ մասին վրայ, ապա՝ անոր բռնադատուած վերաբա-
ժանումով Քէմալական Թուրքիոյ, խորհրդայնացած Հայաս-
տանի և Ադրբեջանի միջև:

Այսօր, յետխորհրդային շրջանին, աշխարհաքաղաքական
մնայուն գործօնները կրկին ներկայ են Եւրոպա-Թուրքիա-
Հայաստան երրեակի յարաբերութիւններուն մէջ, բայց աւելի

բարդ, բազմամակարդակ կառուցուացքի պայմաններու ներկա-
յութեան:

Եւրոպան (առանց Ռուսաստանի) կը ներկայանայ վերնագ-
գային, բազմաշերտ և տնտեսապէս ու օրէնսդրօրէն յառաջացած
որոշ համարկուած կառոյցներով: Արևմտաեւրոպական խոշոր
դրամատիրութիւնը, մին միջազգային դրամատիրութեան կեդ-
րոններէն, կը գործէ շրջանայցած կերպարով և մրցակցութեան
մէջ է դրամատիրական միւս շրջաններուն հետ: Հետևաբար,
ներքին և յատկապէս արտաքին հակադիր շահերը առկայ են
Եւրոմիութեան յարաբերութիւններուն մէջ, որուն լաւագոյն
փաստը Եւրոպական ներդաշնակ արտաքին քաղաքականու-
թեան բացակայութիւնն է:

Ռուսաստան, որպէս տնտեսական և քաղաքական բեւեռ կը
դրսետրէ իր մերթ՝ հակադիր, մերթ՝ համընթաց շահերը Եւրոպայի
նկատմամբ: Ռուսաստան նաև յառաջացուցած է իր համագոր-
ծակցութեան և անվտանգութեան կառոյցները, որոնց Հայաս-
տանն ալ կ'անդամակցի:

Հանրապետական Թուրքիան, որպէս իրաւայաջորդը Օսմա-
նեան Կայսրութեան, նոյնպէս կը ներկայանայ ներքնապէս
կազմակերպուած և արդիականացած կառոյցով, սակայն ենթա-
կայ՝ ներքին ընկերա-տնտեսական, ազգային և կրօնական
հակասութիւններու: Այսօր ալ, Թուրքիա առիթը չփախցներ
Եւրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև առկայ հակադրութիւն-
ներէն օգուտ քաղել: Այսօր ալ, Թուրքիա կանգնած է հայկական
հարցին առջեւ և հաշուետու՝ գործուած ցեղասպանութեան և
անոր հետեւանքներուն համար:

Բայց, հայկական անկախ պետականութեան գոյութիւնը
այդ երրեակի փոխ-կապակցութիւնը կ'օժտէ նոր որակով: Դրա-
կան երեւոյթ է ներկայիս հարաւային Կովկասի մէջ երկու հայկա-

կան պետութիւններու գոյութիւնը, մին՝ ճանաչուած իրաւապէս, միւսը՝ իրողապէս: Ինչ որ թոյլ կուտայ հայկական կողմին, իր իրաւունքներն ու շահերը հանգամանօրէն պաշտպանելու միջազգային ատեաններուն առջեւ: Գոյութիւն ունի նաև սփիւռքի գործօնը որ իր տնտեսական, մարդութիւն և յարաբերութիւններու ցանցով նոյնպէս կարելոր և ամբողջացուցիչ դերակատար է այդ յարաբերակցութեան մէջ:

Այս յարաբերակցութիւնը աւելի կը բարդանայ երբ նկատի կ'առնուին այն բոլոր շրջանային կառոյցները, որոնց անդամ են թէ՛ Թուրքիան և թէ՛ Հայաստանը (ԵԱՀԿ, Սև ծովի երկիրներու համախմբում) եւ կամ կը գործակցին (Ատլանտեան Ուխտ, Եւրոմիութիւն):

Ինչ կը վերաբերի Ժորէսի ելոյթներուն, անոնք կը համարուին Ֆրանսայի Երրորդ Հանրապետութեան պատմութեան ամենաուշագրաւներէն: Ժորէս, իր այս ելոյթով, ինքն ալ մաս կը կազմէ Հայկական Հարցի պաշտպաններու հոյլին, և իբրև այդպիսին կ'արձանագրուի հայոց պատմութեան մէջ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

(Հատված)

... Մինչեւ այդ ժամանակ՝ Ֆրանսիական Պարլամենտի մէջ մի խօսք անգամ չէր եղել Հայերի եւ Հայկական խնդրի մասին. թէւ Բրիտանական պարլամենտը շատ անգամ նրանով զբաղուել էր: Հարկաւոր էր որ Պաշտոնական Ֆրանսիան էլ խօսէր: Այդ նախաձեռնութիւնը բացառապէս պատկանում է Ս. Դ. Հնչակեաններին. նա էր՝ որ Հայկական Խնդիրը Ֆրանսիական Պարլամենտի ամբիոնին վրայ հանեց մի քանի անգամ:

Նախ դիմուեցաւ Կոմս դը Մէօնին. հաւանութիւնը առնուեցաւ եւ պէտք եղած ամէն տեղեկութիւններ, վաւերաթղթեր տրուեցան. նոյնը եղաւ ե՛ւ Դընի Կոշէնին: Շաբաթների տքնաջան աշխատանքի արդիւնք էին դրանք: Դա աջ թեւն էր.— Ֆրանսիական պահպանողականութիւնը: Հարկաւոր էր, որ պաշտօնական Ֆրանսիան, Կեդրոնն էլ խօսէր. այդ մասից ո՛չ մէկը յանձն առեց. Պրն Դէշանէլը¹ մտածելու ժամանակ ուզեց, բայց վերջը յանձն չառաւ: Մեզ պէտք էր Ժօրէսը: Թէ՛ Կոմս դը Մէօնը եւ թէ՛ Դընի Կոշէնը՝ կողմնակի կերպով հասկացրին, որ իրենք շատ թանկագին պիտի համարէին նրա աջակցութիւնը:

Ժօրէսի հետ մեր Կուսակցութիւնը մի թեթեւ պատմութիւն էր ունեցած:

Այդ ժամանակները, դեռ 1895ին, Ուիլիամ Լիբկնեխտը² «Ֆորումարց»ի մէջ մի երկար յօդուած էր հրատարակել՝ պաշտպանելով այն միտքը, որ «Հայկական կոչուած Շարժումները», «Հայաստանի խլրտումները» ոչ այլ ինչ էին, եթէ ոչ ռուսական գործակալութիւնների ստեղծագործութիւններ. մի տեսակ քաղաքական արուեստական արտադրութիւններ, որպէսզէ այդպիսով առիթ ստեղծուէր եւ Ռուսիան իր բանակները Հայաստան մտցնէր ու «Փոքր Ասիան» տիրէր. ռուսի պրոլետարական շահի տեսակէտով, որ իր զարգացման համար խաղաղութեան պահանջ ունէր, թելադրում էր բոլոր սոցիալիստներին՝ որ Շարժումներին հակառակ դիրք բռնէին եւ թոյլ չտային որ Ռուսիա յառաջ խաղացում ունենար եւ ծանրանար ընդհանուր Եւրոպայի վրան՝ թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Ասիայի կողմից: Լիբկնեխտը, ուրեմն, Հայկական Դատի դէմ մաքառիլը «Ռուս բռնակալութեան» դէմ մաքառելու պայման էր համարում: Յայտնի սոցիալիստի աչքից թուրք բռնակալութիւնը խուսափել էր. եւ Հայ Ազգի զարթոնմի, դատի, նրա պահանջների մասին ա՛յդքան անիմաստ եւ անհեթեթ տեղեկութիւններ ունէր:

Ժօրէսը, որ իր փառքի գագաթնակէտին էր հասած որպէս հռետոր՝ եւ ա՛յնքան մեծ ձեռնհասութեամբ խօսում էր ֆրանսիական ներքին եւ ընդհանուր պրոլետարական խնդիրների մասին, դեռ նոր էր սկսել իր ուժերը մարզել արտաքին քաղաքականութեան, նամանաւանդ օտար երկրների վերաբերեալ խնդիրների մէջ: Ժօրէսի այս վերջին ուղղութեամբ գրածները, սկզբնորում կատարեալ մի համբակի տպատրութիւն էին թողնում ընթերցողի վրան. երեւում էր, որ սեպհական ջրի մէջ չէր լողում: Թէեւ շատ չանցած, իր արտաքոյ կարգի աշխատասիրութիւնը, կորովամտութիւնը՝ այդ սահմանների մէջն էլ նրան անմրցելի դարձրին:

Որովհետեւ Լիբկնեխտի հեղինակութիւնը անվիճելի էր եւ

նրա անկեղծութիւնը վեր ամէն կասկածից, ռուսի Ժօրէսը տպատրուելով այդ յօդուածից, արժարժուած մտքերը ճիշդ համարելով, մի սուր յօդուած գրեց «Լա Պտիտ Բէպիալիկ»ի մէջ, — որ այդ ժամանակ Միլլըրանի խմբագրութեամբ էր հրատարակում եւ ֆրանսիական բոլոր սոցիալիստների բերանն էր համարում, բացի Ժիլ Գէտից եւ իր կողմնակիցներից. — եւ ինքն էլ «Հայ մացիոնալիստական» շարժման դէմ խօսեց, որպէս արդիւնք Յարիզմի սաղոանքներին:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան կողմից Ժօրէսին մի մասնաւոր յիշատակագիր ներկայացուեց, որի մէջ՝ բաւականին ընդարձակ կերպով՝ բացատրուած էր Հայերի տնտեսական եւ քաղաքական վիճակը Թիւրքիայում, Հայկական Դատի ծագումը եւ նրա աստիճանական զարգացումը, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան հիմնական սկզբունքները, գաղափարաբանութիւնը եւ իր ջանքերով ու ղեկավարութեամբ արտադրած շարժումները, գործերը. մասնաւորապէս շեշտուած էր 1895, Մայիս 11ի Ծրագրի մասին: Բացատրուած էր որ Ս. Դ. Հնչակեանները մօտեցած էին խնդրին՝ սոցիալիստական գաղափարաբանութեամբ՝ սկզբից ի վեր. եւ նրանք չէին կանգնած իր կարծած «ազգայնական» հողի վրան եւ թէ ի՛նչպէս, ամբողջ սոցիալիստական աշխարհը, նոյն իսկ պրոլետարական շահի տեսակէտից հրամայական պարտականութիւն ունէր օգնելու, որ Հայ Ազգը, Հայաստանը եւ նրա մէջ եղող այլասեռ բոլոր ազգաբնակչութիւնները իրենց ազատագրութիւնը ձեռք բերէին, թօթափելով Թուրք բռնակալութեան ստրկացնող լուծը: Յիշատակագիրը ոչինչ էր խնայած՝ խնդիրը, որքան կարելի է պարզ կերպով ներկայացնելու եւ ցոյց տալու՝ որ ամէն երկրի սոցիալիստները նո՛յնը կ'անէին, նո՛յն դիրքը կը բռնէին, ինչ որ Հայ սոցիալիստները՝ յանձի՛ն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան,

եթէ իրենք էլ մեր տեղը լինէին եւ նոյնպիսի խնդիրների առաջ կանգնած լինէին: Ու վերջը կոչ էր անում Ժօրէսի սոցիալիստական, ընկերային պարտականութեանը՝ յառաջ մղուելու եւ Հայկական Դատի պաշտպանութեան մէջ բաժին ստանձնելու:

Սրանից յետոյ՝ ժօրէսը իր առաջուայ թէզը բողեց եւ մի քանի փոքրիկ յօդուածներով Թուրք բռնապետութեան դէմ յարձակում գործեց:

Երբ, ուրեմն, ժօրէսին ներկայացայ, խնդրելով որ ինքն էլ մասնակցէր Հայկական Խնդրի մասին լինելիք Հարցապնդումին, նա ամենայն պատրաստականութեամբ ընդունեց առաջարկս, միայն տատանուեց՝ թէ սոցիալիստական տեսակետով ո՞րքան ուղիղ կը լինէր պահպանողականների, բուրժուանների հետ ընկերակցել՝ էն էլ հրապարակապէս. ուստի ժամանակ խնդրեց միւս ընկերներին էլ տեսնելու: Մի քանի անգամ գնալ-գալուց, բացատրութիւններից եւ միւս խօսողների պաշտպանած գլխատոր գաղափարների մասին տեղեկութիւններ առնելուց յետոյ՝ վերջապէս խօսք տուեց. միայն խնդրեց ծածուկ պահել եւ ոչ ոքի չասել իր մասնակցութիւնը՝ մինչեւ որոշեալ օրը: Հայկական հարցի, Հայ ժողովրդի մասին՝ պատմական, ազգագրական, տնտեսական, ընկերային, քաղաքական բազմակողմանի տեղեկութիւններ առնելուց եւ ծանօթագրելուց յետոյ՝ Ժօրէսը խնդրեց տալ այն Հայ Պատմագիրները, որ ամենից լաւ են արտացոլացրել Հայ ժողովրդի բարքն ու վարքը, նրա հոգին, նրա միջազգային յարաբերութիւնները: Ես մատնանշեցի գլխատորապէս Խորենացին եւ Եղիշէն ու տուեցի Վիկտոր Լանգլուայի երկհատոր, Նուբար Փաշայի ծախքով հրատարակուած, Հայ գլխատոր պատմագիրների թարգմանութիւնը: Խորենացու «առնական ոճը» եւ Եղիշէի «քնարերգութիւնը» ուղղակի նրան հիացրել էին:

Հայկական Խնդրի առթիւ՝ տեղի ունեցաւ, 3 Նոյեմբեր 1896,

առաջին Հարցապնդումը: Խորհրդարանի սրահը մինչեւ բերան լիքն էր. ժողովուրդը խռնուած էր շրջափակի չորս կողմը, որովհետեւ նախարարական տազնապ յառաջանալու շշուկներ կային: Դիւանագիտական օթեակը լեփ լեցուն էր: Խօսքը բացեց Դընի Կոշէնը. նրան յաջորդեց Կոմս դը Մէօնը: Երկու պահպանողական պատգամաւորներ, բացի պերճախօսութիւնից, մեր ցաւերի ճարտար պատկերացումից, ներկայացրին վեհոգի, ասպետական Ֆրանսիան՝ իր պատմական թռիչքովը. հրաշալի կերպով բացատրեցին, պաշտպանեցին մեր դատը:

Երբ նախագահ Բրիստոնը յայտարարեց թէ՝ «խօսքը քաղաքացի ժօրէսինն է», իրարանցումը սաստիկ եղաւ. դա մի անակնկալ էր ամենքի համար: Ժօրէսը արագ քայլուածքով ամբիոնի աստիճանից վեր բարձրացաւ եւ սեղանի վրայ դրեց Արգայի Դուքսի գիրքը³ ու բերանը բացաւ...: Ժօրէսի այդ օրուայ ճառը կը մնայ մի գլուխ-գործոց՝ մարդկային լեզուի ճարտարախօսութեան պատմութեան մէջ: Դեմոսթենէս, Կիկերոն ունին հրաշակերտներ, բայց նրանցից եւ ո՛չ մէկը յաջողել է ա՛յնպիսի կենդանի պատկեր տալ, ինչպէս արաւ ժօրէսը՝ Սասունի 1894ի ժողովրդական ապստամբութեան եւ կռուի իրադարձութիւնները ներկայացնելիս. մէկը չկար, որ չզգացուէր. ամէն աչք իր շրթունքից էր կախուած: Ու երբ դարձաւ դէպի աջ՝ համաձայնեց, որ ասպետական Ֆրանսիան իր պարտականութիւնը չի կատարել. եւ քննադատութեան տարափը թափեց Ռուսական ու Ֆրանսիական միացեալ քաղաքականութեան վրայ, որ յառաջ չնետուեցան եւ Բռնապետի բազուկը չխորտակեցին ու թոյլ տուեցին, որ մի ազգ կոտորուէր. ու իրենք ոճրագործ հանդիսատեսի դերի մէջ մնացին...: Նախարարապետ Մէլինը բողոքեց, ասաց՝ որ «իր երկրին վնաս է տալիս՝ այդպիսի խօսքեր անելով բեմից»: Նախագահ Բրիստոնը զանգահարեց, պահանջեց, որ իր

խօսքերը ետ առնի: Ժորէսը մի երկու անգամ ետ ու առաջ գնաց ամբիոնի վրայ, յանկարծ կանգնեց Բրիստոնի առաջ, ծանր, չափելով, կէս ժպտուն հեգնանքով ասաց, որ ինքը «պատրաստ է իր խօսքերը ետ առնելու, եթէ Ֆրանսիան իր այս չորս տարուայ պատմութիւնը ջնջէր»: Ու Ժորէսը մնաց Ժօրէս, անփոխարինելի: Բեմից իջաւ նա՝ մօտ մէկ ու կէս ժամ խօսելուց յետոյ⁴: Հայ Յեղափոխականը, մեր նահատակները, մեր Ս. Գործը երբեք աւելի բարձր թարգման չէին կարող ունենալ:

1915 թ., Գահիրէ

ԺԱՆ ԺՈՐԵՍԻ ԿՅԱՆՔԸ

(Ժամանակագրություն)

1859 թ. – Սեպտեմբերի 3-ին, Կաստրում (Տարն) ծնվում է Ժան Ժորէսը: Նրա տոհմը գավառական ու քաղքենիական ծագում ուներ, բազմաթիվ ծովային սպաներ էր տվել: Ժորէսի զարմիկներից երկուսը ծովակալներ դարձան, որոնցից մեկը՝ Բենժամենը, 1889 թ.-ին ծովային նախարար նշանակվեց:

1878 թ. – Կաստրի քոլեջում սովորած տարիներին արտակարգ ընդունակություններ ի հայտ բերելով ու ուսումը շարունակելով Փարիզում՝ Լուի-լը-Գրան լիցեյում, նա բարձրագույն էքզոլ նորմալում դառնում է լավագույն աշակերտը:

1881 թ. – Փիլիսոփայության թեկնածուական քննություններում ստանալով 3-րդ կարգ, Ալբի լիցեյում ուսուցիչ է նշանակվում:

1883 թ. – Թուլուզի համալսարանի գրականության կրթաճյուղում դառնում է գործնական պարապմունքների դասախոս:

1885-1887 թթ. – Հոկտեմբերի 4-ին Կաստրում հանրապետական պատգամավոր է ընտրվում: Քսանհինգ տարեկանում դառնալով Տարնի երեսփոխանը, նա զարգացնում է իր հռետորական կարողությունները, շատ արագ մեծ հեղինակություն ձեռք բերում: Սկսում է կանոնավոր կերպով հանդես գալ տարբեր մամուլի էջերում, հատկապես, 1887-ից, «Լա դեփեշ դը Թուլուզ»-ում («Թուլուզյան ճեպագիր»):

1889 թ. – Օրենսդիր իշխանության ընտրություններում մարքիզ դը Սոլաժից պարտվելուց հետո համախոհները հետզհետե հեռանում են Ժորէսից, քանի որ ցանկանում է պաշտ-

պանել ձեռնարկությունների պետական հսկողությունը:
Վերսկսում է դասավանդել Թուլուզի համալսարանում:

1892 թ. – Պանամայի¹ ճգնաժամի ամենալարված պահին բռնկվում է Կարմայի² հանքերի մեծ գործադուլը, արհեստակցական միության անդամները բախվում են հանքերի ընկերակցության ընդհանուր կառավարիչ բարոն Ռեյի ու ընտրական տեղամասի պատգամավորի հետ, որը հենց մարքիզ դը Սուլաժն էր: Ժորեսն անմիջապես միանում է ընկերվարականության ու դասակարգային պայքարի ճամբարին, «Լա դեֆեշ դը Թուլուզ»-ում դառնում է գործադուլավորների խոսափողը: 1893 թ.-ի հուլիսի 8-ին դը Սուլաժը կորցնում է պատգամավորի իր տեղը, որը գործադուլավորների աջակցությամբ ստանձնում է Ժորեսը: Գործունեության այդ փուլում նա բանվորական արհեստագործական միությունների դատը պաշտպանելու փորձ է ձեռք բերում: Այնուհետև նվիրվում է Կարմայի ապակեգործների շահերի պաշտպանությանը, որոնց շարժումը, սակայն, արագ կասեցվում է: Դրանից հետո Ժորեսը մերձենում է Գեստին³ համախոհ ընկերվարականներին, միաժամանակ փիլիսոփայությունից, «Ձգացական աշխարհի իրականության մասին» խորագրով գիտական թեզ է պաշտպանում, որին հաջորդում է լրացուցիչ՝ «Գերմանական ընկերվարականության արմատները» խորագրով թեզի պաշտպանությունը:

1896 թ. – Նոյեմբերի 3-ին, Ազգային Ժողովում, նա ունենում է իր առաջին հայանպաստ ելույթը:

1897 թ. – Ազգային խորհրդարանում՝ փետրվարի 22-ին երկրորդ և մարտի 15-ին երրորդ՝ վերջին անգամ հանդես է գալիս հայերի դատի պաշտպանությամբ:

1898 թ. – Չուլան «Ֆիգարոյում» հրապարակում է «Ես մեղադրում եմ»-ը: Ժորեսը դառնում է կրքոտ Դրեյֆուսամետ: Դրեյֆուսի գործի կապակցությամբ «Լա փրփիռ ռեփյուրիք»-ում («Փոքրիկ հանրապետություն») հրապարակում է «Վկայություններ»-ը:

1900 թ. – Դառնում է «Պրո Արմենիա» ֆրանսիական հայանպաստ երկշաբաթաթերթի (1900-14 թթ., Փարիզ) խմբագրական կազմի անդամ:

1901 թ. – Էդուարդ Վայանի հետ հիմնադրում է ֆրանսիական ընկերվարական կուսակցությունն ու ձեռնարկում իր «Ֆրանսիական հեղափոխության ընկերվարական պատմության» հրատարակությունը:

1903 թ. – Ժորեսը, որ պաշտպանում էր արմատական Էմիլ Գոմբի կառավարությունը, 1903-1904 թթ. ընտրվում է Ազգային Ժողովի փոխխոսնակ:

1904 թ. – Ապրիլի 18-ին հիմնադրում է «Յունանիտե» թերթը: Լրագրի էջերում նա հանդես է գալիս ի նպաստ եկեղեցու և պետության բաժանման, հակադրվում է Ժյուլ Գեստի ուղղափառ մարքսիզմին, ձգտելով մերձեցնել ընկերվարական տարբեր ուղղությունները: Գեստը, սակայն, ձեռք է բերում երկրորդ Միջազգայնականի պաշտպանությունը: Ազգային Ժողովի ընտրություններում, ճիշտ հակառակը, Ժորեսի կողմնակիցները շահում են 31, Գեստինը՝ միայն 12 աթոռ:

1905 թ. – Ապրիլին, համաշխարհային խորհրդաժողովի ժամանակ, նա համաձայնվում է բանվորական միջազգայնականի ֆրանսիական բաժանմունքի, այլ կերպ՝ ֆրանսիա-

կան ընկերվարական կուսակցության ստեղծմանը, որտեղ գեստականները մեծամասնություն են կազմում: Այն 1904 թ.-ին Ամստերդամում գումարված Միջազգայնականի խորհրդաժողովի հովանու ներքո համախմբում է բանվորական տարբեր կուսակցությունները: 1901 թ.-ից ընդհուպ 1914 թ.-ը ժորեսը դառնում է միջազգային ընկերվարական բյուրոյի ազդեցիկ անդամներից մեկը:

1910 թ. – ժորեսը Կարմրյուն պատգավոր է վերընտրվում:

1914 թ. – Դարձյալ Կարմրյուն պատգամավոր է ընտրվում վերջին անգամ: Հանուն խաղաղության համընդհանուր գործադուլի կոչ անելուց երեք օր անց, հուլիսի 31-ին, համաշխարհային պատերազմի սանձազերծումից երեք օր առաջ, Փարիզում, Մոնմարտր փողոցի «Քրուասան» սրճարանում ահաբեկիչ Ռաուլ Վիլենը գնդակահարում է ժորեսին: Նրա մահը, ոճրագործի ազատ արձակումը խոր հուզում են հարուցում ընկերվարականների միջավայրում:

1924 թ. – Անյունը տեղափոխում են Պանթեոն:

1959 թ. – Ծննդյան 100-ամյակի կապակցությամբ հիմնադրվում է գիտահետազոտական ժորեսյան ընկերակցությունը:

2000 թ. – Սկսվում է ժորեսի երկերի գիտաքննական հրատարակությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՉԻ ՆԱԽԱԲԱՆԸ

- 1 Տե՛ս ազգային-ազատագրական գործիչ, հրապարակագիր, Հնչակյան կուսակցության առաջնորդ Ստեփանոս Սապահ-Գյուլյանի (1861-1928 թթ.) վկայությունը այս հրատարակության հավելվածում:
- 2 Մաքսել Պրուստ, «*Ժամ Սանթեոյ*», նախաբանը՝ Անդրե Մորուայի, Փարիզ, «Գալիմար» հրատ., 1952 թ., էջ 316-318:
- 3 Ժան ժորես - «*Պերք է փրկել հայերին*», Փարիզ, «Միլ է ուն նյուի» («Հազար ու մեկ գիշեր») հրատ., 2007 թ., 79 էջ:

ԺԱՆ ԺՈՐԵՍԻ ԵՐԵՔ ԵԼՈՒՅԹԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

- 1 Այս և մյուս ենթախորագրերը ֆրանսիական հրատարակչությանն են:
- 2 Հայկական դեպքերի մասին հարցապնդման քննարկմանը մասնակցել են պարոնայք Կոչենը, կոմս դը Մյունը, Դելաֆոսը, նրանց բազմաթիվ գործընկերները: Նիստին նախագահել է Անրի Բրիստը («*Ֆրանսիայի հանրապետության պաշտոնական տեղեկագիր*», խորհրդարանական քննարկումներ, Ազգային ժողովի 1896 թ.-ի նոյեմբերի 3-ի նիստը, Փարիզ, Պաշտոնական տեղեկագրերի հրատարակչություն, 4-ը նոյեմբերի 1896 թ., էջ 1359-1362):
- 3 Ժյուլ Մելինի կառավարության արտաքին գործերի նախարարը Գաբրիել Հանոթոն էր (1853-1944 թթ.): 1898 թ.-ի հունիսի 28-ին նա հրաժարվեց Անրի Բրիստնի կազմավորած կառավարությունում պաշտոնավորելուց՝ ի նպաստ Անգլիայի հետ սերտ համագործակցության քաղաքականության: Այդ քայլով նա տարերայնորեն նպաստեց ֆրանս-ռուսական կապերի ամրապնդմանը, Դրեյֆուսի գործի ականա ուղղորդմանը, ինչպես նաև արևելյան հարցի սրմանը, որի ամենաողբերգական հետևանքը հայկական մեծ կոտորածները դարձան:

- 4 Բեռլինի դաշնագիրը ստորագրվել է 1878 թ.-ի հուլիսի 13-ին, մոտ մեկ ամիս տևած վեհաժողովից հետո, որի աշխատանքներին գերմանական կայսրության վարչապետ Օտտո ֆոն Բիսմարկի նախագահությամբ մասնակցում էին Եվրոպայի գերտերությունների ներկայացուցիչները։ Բեռլինի դաշնագիրը վերանայեց Սան Ստեֆանոյի 1878 թ.-ի մարտի 3-ի դաշնագիրը, որը 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հաղթանակած Ռուսաստանը պարտադրել էր թուրքիային։ Այդ պայմանագիրը, սակայն, չէր իրագործվել Մեծ Բրիտանիայի վարչապետ Դիզրաելիի ընդդիմության պատճառով, որը դեմ էր Օսմանյան կայսրության թուլացմանը։ Որպեսզի իր դիրքերն ամրապնդի Միջերկրական ծովում՝ Կիպրոսում և Արևելքում, Մեծ Բրիտանիան պատրաստ էր անտեսել Օսմանյան կայսրության հայերի հետագա ճակատագիրը։ Այնուամենայնիվ Բեռլինի վեհաժողովը անդրադարձավ հայկական հիմնահարցին և Օսմանյան կայսրությանը պարտադրեց բարենորոգումներ։ Դաշնագիրը նախատեսում էր Օսմանյան կայսրության տարածքում հայկական ինքնավարություն ստեղծել, որի ապահովությունը պիտի երաշխավորեր Եվրոպական Խորհուրդը (տե՛ս, «Հայաստանը միջազգային դիվանագիտական և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.)», Երևան, 1972 թ., էջ 83-130)։

Գերտերությունների երաշխիքները, սակայն, ի դերն ելան 1894-1896 թթ. կոտորածներով, որոնց անդրադառնում է Ժորեսը։

- 5 Օսմանյան կայսրության այս լեռնային գավառի հայկական գյուղերի արյունոտ հաշվեհարդարը 1894 թ.-ի ամռանը տասնյակ հազարավոր զոհեր խեց, փաստորեն 1894-1896 թթ. մեծ կոտորածների սկիզբը դարձավ (տե՛ս՝ Թառոյան Կ., «Ժողովրդական շարժումները Սասունում. 1890-1894 թ.», Երևան, 1966 թ.)։
- 6 «Վիլայեթ» էին կոչվում Օսմանյան կայսրության վարչական միավորները՝ նահանգները։
- 7 Պատերազմ (1618-1648 թթ.) գերմանական բողոքական և կաթոլիկ իշխանների միջև, որը համաեվրոպական բնույթ ստացավ։

- 8 Այս գավառում գործադրված կոտորածներից հետո եվրոպական գերտերությունները Օսմանյան կայսրությանը պարտադրեցին թուրքական քննիչ հանձնախումբ ստեղծել։ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների հսկողության ներքո Օսմանյան իշխանությունները պիտի սկսեին «հայկական ոճրագործ մարտախմբերի» հետաքննությունը (տե՛ս՝ Չարբգ Դ., «Յուշամարեան Բարձր Հայքի, Կարինապարում», Բեյրութ, 1957 թ.)։

Ինչպես հետագա իր ելույթում բացահայտում է Ժորեսը, կայսրության կառավարիչները հետաքննությունը զոհերի դեմ շրջեցին, ստիպեցին իրենց մեղավոր համարել։

- 9 Ղրիմի պատերազմի ընթացքում (1854-1856 թթ.) Վիլյամ Յուարդ Գլադստոնը (1809-1898 թթ.) զբաղեցնում էր Անգլիայի ելևմտական նախարարի պաշտոնը։ Դուքս Արգայլը (1823-1900 թթ.) նույն պաշտոնն զբաղեցրել է լորդ Սիլի կառավարությունում։
- 10 George John Douglas Campbell, duke of Argyll, *Our Responsibilities for Turkey, facts and memories of forty years*, London, J. Murray, 1896 թ.։ Մեծ Բրիտանիայի դիվանագիտական պատասխանատվությունը հայերի զանգվածային կոտորածների սանձազերծման առումով, ակնհայտ է։ Միաժամանակ Անգլիայի քաղաքական գործիչների մեծ մասը՝ սկսած Գլադստոնից, ինչպես նաև հասարակական կարծիքը, չափազանց նվիրված էին նահատակված հայերի դատի պաշտպանությանը։ «Գլադստոնի [նախկին վարչապետի] վերջին ծավալուն ելույթը նվիրված էր հայերի պաշտպանության պահանջին», - գրում է Բյուքստոնն իր *Travels and Politics in Armenia* գրքում (1914 թ.)։
- 11 Տվյալ ժամանակի Ռուսաստանի դեսպանը Թուրքիայում։
- 12 Հայկական հարցին նվիրված դիվանագիտական և այլ փաստաթղթերի երկհատոր ժողովածու։ Լույս է տեսել Փարիզում, 1897 թ.-ին։ Ընդգրկում է Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում գտնվող ֆրանսիական դիվանագետների զեկուցագրերը՝ ուղղված Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին։ Ներկա-

յացնում է 1894-96 թթ. հայկական կոտորածների մանրամասները, տվյալներ զոհերի վերաբերյալ, տուժած ընտանիքների ցուցակները: Ժողովածույում տեղ են գտել նաև հուշագրեր, խմբակային դիմումներ, երեք գերտերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի դեսպանների մշակած բարենորոգումների ծրագրերը, որոնք ներկայացվել էին Բարձր Դռանը («Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996 թ., էջ 111-112):

13 Ֆրանսիական քաղաքական և պետական գործիչ (1841-1929 թթ.), ֆրանսիական ակադեմիայի անդամ, եղել է վարչապետ: Նա արևմտահայերի ազատագրական շարժմանը համակրել, արմատական մամուլում հաճախ է հանդես եկել հողավճարով, իսկ 1896 թ.-ին հրապարակել է «Հայերի ջարդերը: Չոհերի վկայություններ» գիրքը: Եղել է «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ:

14 Ակնարկվում է սեպտեմբերյան հեղափոխությունը, որը տապալեց Նապոլեոն 3-րդի ինքնակալությունն ու Ֆրանսիան նորից հանրապետություն հռչակեց:

15 Նույն իրավիճակը:

16 Ժամ Ժորեսի ներկայացրած բանաձևը հետևյալ բովանդակությունն ունի. «Ֆրանսիայի Ազգային Ժողովը, նկատի ունենալով Եվրոպայի պատասխանատվությունը Հայաստանի սահմուկեցուցիչ կոտորածների հանդեպ, ցավելով հավակնությունների, նախանձախնդրությունների, հետադիմական նկատառումների համար, որոնք թույլ չտվեցին ժամանակակից Եվրոպային Արևելքում միասնական քայլերի դիմել ի պաշտպանություն բռնաճնշվող մարդկության, հույս է հայտնում, որ աշխարհի բոլոր ժողովուրդները կմիավորվեն՝ անկողմնակալ հասարակական կարծիք ստեղծելու՝ հասնելու համար այն բանին, որ եվրոպական գերտերությունները հայերի անվտանգությունը ապահովեն, Թուրքիայի՝ բոլոր կրոնների ու ցեղերի ազգաբնակչությանը ազատության, բարեկեցության ու առաջընթացի համընդհանուր երաշխիքներ տան»:

Քվեարկությանը մասնակցեցին նիստին ներկա 497 պատգամավորներ, որոնցից 444-ը դեմ և միայն 53-ը՝ հիմնականում ընկերվարականները կողմ քվեարկեցին:

Ավելացնենք, որ ավելի քան մեկ դար՝ 108 տարի անց Ֆրանսիայի Ազգային Ժողովը միաձայն ընդունեց հայերի ցեղասպանությունը և նույնիսկ այն դատապարտող օրենք սահմանեց: Տե՛ս՝ «Չորակցություն՝ հայերի ցեղասպանության ընդունումը Ֆրանսիայի Ազգային Ժողովում» գիրքը, թարգմ.՝ Գր. Ջանիկյանի, նախաբանը՝ Հր. Մաթևոսյանի, «Զանգակ» հրատ, Երևան, 1999 թ.:

17 Նիստին նախագահել է Անրի Բրիսոնը: Տե՛ս՝ «Հարցապնդումների քննարկումներ [...] պ. Ժորեսը Կրետեի իրադարձությունների կապակցությամբ կառավարության դիրքորոշման մասին»: («Ֆրանսիայի հանրապետության պաշտոնական տեղեկագիր»): Խորհրդարանական քննարկումներ, Ազգային Ժողովի 1897 թ.-ի փետրվարի 22-ի նիստը», Փարիզ, Պաշտոնական տեղեկագրերի հրատարակչություն, 23-ը փետրվարի 1897 թ., էջ 500-502):

18 Խոսքը նույն Գաբրիել Հանթոյի մասին է:

19 Պոլ Գամբոնը (1843-1924 թթ.) ֆրանիացի քաղաքական գործիչ ու դիվանագետ, քիչ հայտնի հանրապետական էր, բայց հաճախ էր իր գործունեությամբ վճռական դեր խաղում: 1890 թ.-ին Բարձր Դռան դեսպանը դարձավ: Նա զուր ջանաց արտաքին գործերի իր նախարարին՝ Գաբրիել Հանթոյին հայկական մեծ կոտորածների հիմնահարցին մոտիկից հասու դարձնել: Նրա ճեպագրերը, որ ավելի ուշ ֆրանսիական «Դեղին գրքի» հիմքը պիտի դառնային ճշգրիտ են, կանխորոշիչ: Կանխազգալով, որ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունն ի վերջո անտեսելու է իր ահազանգները, հայերի իրավիճակի մասին տեղյակ պահեց հանրապետական մտերիմներին:

20 Նիստին նախագահել է Անրի Բրիսոնը: Տե՛ս՝ «Հարցապնդումների քննարկում [...]», Ֆրանսիայի հանրապետության պաշտոնական տեղեկագիր», խորհրդարանական քննարկումներ, Ազգային Ժողո-

վի 1897 թ.-ի մարտի 15-ի նիստը, Փարիզ, Պաշտոնական տեղեկագրերի հրատարակչություն, 16-ր մարտի 1897 թ.:

21 Խոսքը դարձյալ չափավոր ժյուլ Մելինի մասին է, որի կառավարությունը համագործակցում էր աջակողմյանների հետ:

22 Այսինքն՝ Գաբրիել Հանոբուն:

23 Ռենե Գոբլեն (1828-1905 թթ.), պատգամավոր Սոմից, եղել է Ազգային խորհրդի նախագահ, արտաքին գործերի նախարար: Նա մասնակցել է խորհրդարանական այս քննարկմանը՝ առաջինը կառավարության ուշադրությունը հրավիրելով Կրետեի իրադարձությունների վրա (խոսքը 1896 թ.-ին Կրետեում բռնկված հունական ապստամբության մասին է, որի նպատակը թուրքական լծից ազատագրվելն ու Հունաստանին վերամիավորվելն էր: Հույների հետ թուրքերի դեմ կռվում էին 600 հայեր: Թեև Հունաստանը պարտվեց, սակայն Կրետեին տրվեց վարչական ինքնավարություն՝ «եվրոպական պետությունների հովանավարության ներքո»: (Տե՛ս՝ ՀՄՀ, 5-րդ հատոր, էջ 686, Երևան, 1979 թ.):

24 Նիկոլայ 2-րդ ցարն ու կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնան Փարիզ են այցելել 1896 թ.-ի հոկտեմբերին: Այդ այցը պիտի ամրապնդեր ֆրանս-ռուսական կապերը:

25 1896 թ.-ի նոյեմբերի 3-ի քննարկումից հետո ժյուլ Մելինի կառավարությունը համաձայնվեց հրատարակել տալ ֆրանսիական «Դեղին գիրքը» («Հայկական իրադարձություններ՝ 1893-1897 թթ.»), Փարիզ, 1897 թ.), որը պարունակում է Բարձր Դռան Ֆրանսիայի դեսպան Պոլ Գամբոնի ճեպագրերը: Ինչ վերաբերում է անգլիացիներին, նրանք հայկական իրադարձությունների մասին «Blue Book»-ը հրատարակել էին դեռևս 1896 թ.-ին:

26 Եվրոպական գերտերությունների՝ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, Ռուսաստանի, Պրուսիայի անդամակցությամբ ստեղծված անպաշտոն խորհուրդ (1814-1914 թթ.), որի նպատակը ուժերի հավասարակշռության պահպանումն էր: Ֆրանսիան անդամակցել է

Նապոլեոնյան պատերազմի պարտությունից հետո՝ 1815 թ.: Խորհրդի հետագա թուլացումը հանգեցրեց 1-ին աշխարհամարտի հրահրմանը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1 Mouradian, Claire (dir.), *Arménie: une passion française. Le mouvement arménophile en France (1878-1923)*, Paris: Magellan et cie, 2007, p. 41-93.

2 Տեսնել յառելուածին մէջ Ստ. Սալահ-Գիւլեանի «Պարասխանարումները», Գահիրէ, 1915:

3 Այս բաժնին համար օգտագործուած են՝

– Levy, Levy. *Jean Jaurès, Anthologie*. Paris: Calmann-Lévy, 1983. 310 p.

– Rioux, Jean-Pierre. *Jean Jaurès*. Paris: Éditions Perrin, 2005, 326 p.

– Ellul, Jacques. *Les successeurs de Marx*. Paris: Éditions de la Table Ronde, 2007, 218 p.

ՀԱՎԵԼՎԱԾ

1 Այժմ նախագահ Պատգամատրական ժողովի:

2 Կարլ Լիբկնեխտի հայրը:

3 Այդ գրքով Արգայի Դուքսը, Հայկական Դատը եւ Արեւելեան Խնդիրը վերլուծելով, ցոյց էր տալիս՝ թէ ինչպէս Ֆրանսիան եւ Անգլիան պատմական մեծ սխալը գործեցին 1854ին, Խրիմի պատերազմով, Թուրքիային պաշտպանելով:

4 Այս եւ դրանից յետոյ, Հայկական Խնդրի առթիւ եղած հարցապնդումները, մի առ մի, մեր կողմից, նկարագրուած են «Նոր-Դար»ի մէջ: Դրանք թանկագին վաւերաթղթեր են Հայկական Յեղափոխական Պատմութեան համար՝ ընդհանրապէս, Ս. Դ. Հնչակեանութեան համար՝ մասնատրապէս: Մեր ժամանակակից պատմութիւնը՝ առանց դրանց, հասկանալ եւ համադրութիւնը ունենալ չի կարելի:

ԺԱՆ ԺՈՐԵՍԻ ԿՅԱՆՔԸ

- ¹ Խոսքը Պանամայի ջրանցքի շինարարության ժամանակ ֆրանսիական բաժնետիրական ընկերության վարչության բույլ տված խոշոր հալիչտակումների, չարաշահումների մասին է, որի պատճառով սնանկացան հազարավոր բաժնետերեր:
- ² Հանքավայր Ֆրանսիայում:
- ³ Ժյուլ Գետտ (1845-1922 թթ.) – ֆրանսիացի քաղաքական գործիչ, ֆրանսիական բանվորական կուսակցության հիմնադիր: Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1916 թթ.) եղել է պետական նախարար:

Հրատարակությունը հովանավորել են՝

Արրահամ Ալանճեան
Յակոբ Ալանճեան
Արա Արապեան
Յարութ Դաւիթեան
Հայկ Արմէն Հանէսեան
Արմէն Ճանկուզեան
Մարիո Ճըրկէս
Ստեփան Խտորեան
Պերճ Պէրպէրեան



Նշումների համար



«Նախիջևան» գիտաուսումնական կենտրոն
Institut "Nakhijevan" du Canada
"Nakhijevan" Institute of Canada

11766 de Poutrincourt Montréal (Québec) H3M 2A3 CANADA
antranig1@videotron.ca

Էջադրումը՝ Ս. Հովհաննիսյան

Տպագրությունը՝ «Նահապետ» ՍՊԸ

Թուղթ՝ օֆսեր:

Տպագրությունը՝ օֆսեր:

5 պլայմ. տպ. մամուլ:

9(47.925)
Չ-86
հ

«Ավարտվում էր խորհրդարանական քննարկումը հայերի կոտորածների կապակցությամբ, ակնհայտ էր դառնում, որ Ֆրանսիան ոչինչ չի անելու: Հանկարծ՝ ծախ ծայրահեղականների շարքերից մարմնեղ, մոտ երեսուն տարեկան, սև, գանգուր մազերով մեկը, ում, եթե հետևեիք, կնկատեիք, որ ներքին խռովքով է համակված, ասես վարանելով անսա^օլ, թե^օ չանսալ ներքին ծայնին, մի պահ տատանվում է նստատեղում, հետո կտրուկ ձեռքը բարձրացնելով, ասես ձերբազատվելով այն ընդունված կարգից, որը պարտադրվող ձևականություն է ծայն խնդրելու համար, ինքնավստահ քայլերով, միաժամանակ սարսռալով ստանձնած ծանր պատասխանատվությունից, մոտենում է ամբիոնին: Գուզոնն է [...] Ասես ազդականչ լիներ, որ երկար արձագանքում էր ժանի հոգում: Նայելով Գուզոնի կարճ ոտքերին, որոնք շփոթ փութկոտությամբ ամբիոն էին շտապում, ժանին թվում էր, թե մարդկային էությունը երբեք այդքան արժանապատվություն ու վեհանձնություն չի արտահայտել»:

ՄԱՐՍԵԼ ՊՐՈԻՄՍ - «ԺԱՆ ՍԱՆԹԵՈՅ»



ՆԱՐԱՊԵՏ